Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2019թ. փետրվարի 7-ի թիվ 2/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/11, հոկտեմբերի 19-ի թիվ 13/5 և 13/6 որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի հուլիսի 2-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինն երորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, հաշվեքննության է ենթարկել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսատնտեսական գործունեությունը:

Հաշվի առնելով պետական պահուստին առնչվող տեղեկությունների բնույթը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռոզերվների գործակալության հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներկայացվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով:

Ղեկավարության պատասխանատվությունը

Նախարարության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև Նախարարության ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Նախարարության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը

կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետ-վությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանութ-յունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի, Փրկարար ծառայության, Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության և «Հիդրոօդերևու-թաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների հաշվետվություններն արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ու ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում, իսկ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2018 թվականի ինը ամիսների հաշվետվությունը անարժանահավատ է, հայտնաբերվել են 173,249.3 հազ. դրամի էական խեղաթյուրումներ, որոնց հետևանքները համատարած են և ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է բացասական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը, Փրկարար ծառայությունը, Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում թույլ են տվել էական անհամապատաս-խանություններ և խեղաթյուրումներ, որոնց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության ու ստուգման համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում: «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և ստուգման համապատասխանության տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

Գագիկ Ոսկանյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
7 փետրվարի 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի վերաբերյալ

2017 թվականին պետական բյուջեից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի /այսուհետ՝ Նախարարություն/ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով նախատեսվել է հատկացնել 52,739.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը կազմել է 81,277.4 հազ. դրամ: 2017 թվականի դեկտեմբերի 7-ին Նախարարությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը իր կողմից իրականացվող ծրագրերի գծով նախատեսված հատկացումների միջև վերաբաշխումներ կատարելու համար: Ստանալով ՀՀ ֆինանսների նախարարության ծանուցագրերը, Նախարարությունը պետական բյուջեի՝ «Փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում» ծրագրից պակասեցրել է 27,256.5 հազ. դրամ, որն ավելացրել է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծրագրով նախատեսված հատկացումներին:

2017թ. ՊՈԱԿ-ների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի և բնական գազի համար Նախարարությունը, առանց բյուջեով նախատեսված ֆինանսավորման, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ստանձնել է լրացուցիչ պարտավորություններ

Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ վերաբաշխված գումարն ուղղվել է «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով էլեկտրաէներ-գիայի և բնական գազի գերածախսի պատ-ճառով առաջացած կրեդիտորական պարտքե-րը մարելուն: Գերածախսը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախարարության վարչական համալիրում տեղակայված «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն», «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» և «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ների էներգետիկ ծախսերի համար առանձնացված հաշվառում չի տարվել և այդ ծախսերը կատարվել են Նախարարության «Էներգետիկ ծառայություններ» հոդվածից: Փաստորեն, 2017 թվականին ՊՈԱԿ-ների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի և բնական գազի համար Նախարարությունը, առանց բյուջեով նախատեսված ֆինանսավորման, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ստանձնել է լրացուցիչ

պարտավորություններ, որի դիմաց վճարումները տարվա ընթացքում ուշացնելու համար մատակարար կազմակերպությունները հաշվարկել և գանձել են տույժեր՝ էլեկտրաէներգիայի գծով՝ 1,129.2 հազ. դրամ և բնական գազի գծով՝ 1,450.4 հազ. դրամ, և արդյունքում Նախարարությունը կատարել է բյուջետային միջոցների 2,579.6 հազ. դրամի չնախատեսված ծախս:

2018 թվականի պետական բյուջեից Նախարարությանը «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով հատկացվել է 55,717.8 հազ. դրամ: Նախորդ տարվա առաջին կիսամյակում 34,555.0 հազ. դրամ ծախսի դիմաց 2018 թվականին այդ հոդվածով ծախսը փաստացի կազմել է 19,368.1 հազ. դրամ, և ֆինանսավորված 22,538.2 հազ. դրամից 1,190.1 հազ. դրամը ուղղվել է նախորդ տարվա ավարտին առաջացած կրեդիտորական պարտքի մարմանը, իսկ 1,980.0 հազ. դրամի չափով առաջացել է դեբիտորական պարտք:

2017 թվականին Նախարարությունը «Տրանսպորտային նյութեր» հոդվածով ֆինանսավորվել է 13,361.5 հազ. դրամ, որի հաշվին «Ֆլեշ» ՍՊԸ-ից գնվել է 12,782.6 հազ. դրամի բենզին, «Դարֆ» ՍՊԸ-ից՝ 418.9 հազ. դրամի անվադողեր ու մարտկոցներ և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ից՝ 160.0 հազ. դրամի ավտոպահեստամասեր:

Նախարարության պահեստից 2017թ. անհիմն դուրս է գրվել 491.8 հազ. դրամի 1455 լ «ռեգուլյար» տեսակի բենզին (մեկ այլ ակտով՝ 1470 լ բենզին դուրս է գրվել ՀՀ փրկարար ծառայության պահեստից):

2017 թվականին գնվել է 30795 լիտր «ռեգուլյար» տեսակի բենզին՝ մեկ լիտրը 338 դրամով և 6725 լիտր «պրեմիում» տեսակի բենզին՝ մեկ լիտրը 353 դրամով: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ յուրաքանչյուր եռամսյակի համար կազմված և նյութական պատասխանատու չհանդիսացող անձի կողմից միանձնյա ստորագրված իրավական հիմք չունեցող չորս ակտերով խոտհնձիչ մեքենաների և սանմաքրման աշխատանքների համար Նախարարության պահեստից 2017 թվականին անհիմն դուրս է գրվել 491.8 հազ. դրամի 1455 լիտր «ռեգուլյար» տեսակի բենզին (նույն աշխատանքների կատարման համար այդ անձի կողմից միանձնյա ստորագրված մեկ այլ ակտով 1470 լիտր բենզին դուրս է գրվել ՀՀ փրկարար ծառայության պահեստից):

2018 թվականի պետական բյուջեից Նախարարությանը «Տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվել է հատկացնել 15,870.0 հազ. դրամ, առաջին կիսամյակում այդ հոդվածով ֆինանսավորվել է 5,553.5 հազ. դրամ:

2017 թվականին Նախարարությունը ՀՀ կառավարությանը ներկայացրել է որոշման նախագիծ՝ ՀՀ փրկարար ծառայության «Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաները մարտական վիճակում պահելու նպատակով

դրանց վերանորոգման համար ըստ նախահաշվի 83,000.0 հազ. դրամի լրացուցիչ հատկացում կատարելու համար: ՀՀ կառավարության 30.11.2017թ. թիվ 1518-Ն որոշմամբ 28 միավոր «Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաների պահպանման, նրանց հրշեջ պոմպերի և այլ սարքավորումների վերանորոգման հետ կապված ծախսերը կատարելու համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով հատկացվել է 77,000.0 հազ. դրամ, «Տրանսպորտային նյութեր» հոդվածով՝ 6,000.0 հազ. դրամ:

Նախարարությունը ներկայացրել է պահանջով չհիմնավորված անարժանահավատ նախահաշիվ, իսկ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցներից 21,046.9 հազ. դրամը ծախսվել է ոչ նպատակային:

Նախարարությունը, որպես անհետաձգելի պահանջ մեկ անձից գնման ընթացակարգով 2017 թվականի դեկտեմբերի 22-ին «Լավ ընկեր» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագիր ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման համար՝ 73,729.6 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի շրջանակում կատարված ծախսերի, գնված ապրանքների, տեխնիկական բնութագրերի և պահեստի մնացորդների զննության արդյունքում արձանագրվել են ոչ նպատակային ծախսեր.

- Գնվել են «Իսուզու» մակնիշի ավտոմեքենաներին չհամապատասխանող 10,230.0 հազ. դրամի 66 հատ 14.00R20 չափի անվադողեր:
- Գնվել են «Իսուզու» մակնիշի ավտոմեքենաների 1,746.0 հազ. դրամի արգելակման կոճղակների 18 լրակազմ և 1,440.0 հազ. դրամի 8 շարժիչի մեկնարկիչներ այն դեպքում, երբ պահեստում առկա էր այդ ավտոմեքենաների արգելակման կոճղակների 316 լրակազմ և 23 շարժիչի մեկնարկիչներ:
- Որպես անհետաձգելի պահանջ գնված 2,520.0 հազ. դրամի 36 հատ 9.00R-20 չափի անվադողերը, 199.5 հազ. դրամի 5 հատ մարտկոցները և 2,205.0 հազ. դրամի 9 հատ ձայնային ազդանշանները առ հաշվեքննության պահը չեն տեղադրվել և գտնվում են ՀՀ փրկարար ծառայության պահեստում:
- Պայմանագրի շրջանակում «Իսուզու» մակնիշի ավտոմեքենաների համար գնված 2,706.4 հազ. դրամի 10 հատ 11.00R-20 չափի անվադողերը և 32 կուտակիչ մարտկոցները տեղադրվել են համակարգի այլ մակնիշի ավտոմեքենաների վրա:

Փաստորեն, Նախարարությունը ներկայացրել է պահանջով չհիմնավորված անարժանահավատ նախահաշիվ, իսկ ՀՀ կառավարության

30.11.2017թ. թիվ 1518-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացված միջոցներից 21,046.9 հազ. դրամը ծախսվել է ոչ նպատակային:

Բացի այդ, «Լավ ընկեր» ՍՊԸ-ից անվադողերը և կուտակիչ մարտկոցները գնվել են նույն տարի «Դարֆ» ՍՊԸ և «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերով գնված նույն տեխնիկական բնութագրերը ունեցող ապրանքներից 1,556.3 հազ. դրամով թանկ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2017 թվականին գնված անվադողերի և մարտկոցների գները

հազ. դրամ

Ապրանքի անվանում	«Դարֆ» ՍՊԸ	«Արպանիվ» ՍՊԸ	«Լավ ընկեր» ՍՊԸ-ից գնված ապրանքներ			
	միավորի գին	միավորի գին	միավորի գին	գնի տարբերություն	գնված քանակ	գումար
Անվադող 9.00R20	59.0	-	70.0	11.0	78	858.0
Անվադող 11.00R20	-	93.8	115.0	21.2	10	212.0
Անվադող 12.00-18	-	119.8	148.0	28.2	6	169.2
Մարտկոց 6US-100Ա	-	38.8	39.9	1.1	38	41.9
Մարտկոց 6US-190Ա	60.0	-	78.0	18.0	10	180.0
Մարտկոց 6US-75Ա	-	25.8	33.6	7.8	4	31.2
Մարտկոց 6US-140Ա	48.0	-	64.0	16.0	4	64.0
Ընդամենը						**1,556.3**

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին «Արմ-Սեքյուրիթի» ցուցահանդեսի ավարտից հետո մատակարարված 6,937.5 հազ. դրամի ապրանքների և ծառայությունների գնման համար կատարված ծախսերը չեն հիմնավորվում

ՀՀ կառավարության 07.09.2017թ. թիվ 1112-Ն որոշմամբ «ԱրմՍեքյուրիթի» անվտանգության բարձր տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսը 2017 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 4-ը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Նախարարությանը հատկացվել է 13,335.5 հազ. դրամ, որի չափով Նախարարությունը կատարողների հետ սեպտեմբերի 1-ին կնքել է վեց պայմանագրեր: Հարկային հաշիվների զննությամբ պարզվել է.

- «Պրոմ Էքսպո» ՍՊԸ-ի հետ կնքված 5,838.0 հազ. դրամի ARMSECURITY 1 պայմանագրով 2017 թվականի դեկտեմբերի 14-ին դուրս գրված 750.0

հազ. դրամի հարկային հաշվով ներկայացուցչական ծառայության (սուրճի ընդմիջում) մատուցման ամսաթիվ է ներկայացված դեկտեմբերի 14-ը:

- «Պրոմ Էքսպո» ՍՊԸ-ի հետ կնքված 1,700.0 հազ. դրամի ARMSECURITY 4 պայմանագրով 2017 թվականի դեկտեմբերի 14-ին դուրս գրված 1,500.0 հազ. դրամի հարկային հաշվով հուշանվերների առաքման ամսաթիվ է ներկայացված դեկտեմբերի 14-ը:
- «Եվրոպա» ՍՊԸ-ի հետ կնքված ARMSECURITY 6 պայմանագրով 2017 թվականի նոյեմբերի 16-ին դուրս գրված 2,800.0 հազ. դրամի հարկային հաշվով ճաշկերույթի մատակարարման ամսաթիվ է ներկայացված նոյեմբերի 16-ը:
- «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված 1,537.5 հազ. դրամի ARMSECURITY 3 պայմանագրով 2017 թվականի սեպտեմբերի 29-ին դուրս գրված հարկային հաշվով տպագրական ծառայությունների մատուցման ամսաթիվ է ներկայացված սեպտեմբերի 24-ը:
- «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված ARMSECURITY 5 պայմանագրով 2017 թվականի սեպտեմբերի 29-ին դուրս գրված 350.0 հազ. դրամի հարկային հաշվով գրենական պիտույքների մատակարարման ամսաթիվ է ներկայացված սեպտեմբերի 29-ը:

Փաստորեն, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին «Արմ-Սեքյուրիթի» ցուցահանդեսի ավարտից հետո մատակարարված 6,937.5 հազ. դրամի ապրանքների և ծառայությունների գնման համար կատարված ծախսերը չեն հիմնավորվում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության վերաբերյալ

Ծառայության էլեկտրաէներգիայի գերածախսը կազմել է 305334.4 կՎտ/ժ, որի կեսից ավելին առաջացել է ծախսի լիմիտները հինգ բաժանորդների կողմից զգալի գերազանցելու հետևանքով

2017 թվականին ՀՀ փրկարար ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով պետական բյուջեից հատկացվել է 96,861.7 հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Ծառայության էլեկտրաէներգիայի գերածախսը կազմել է 305334.4 կՎտ/ժ, որի կեսից ավելին առաջացել է Ծառայության հինգ առանձնացված բաժանորդների կողմից էլեկտրաէներգիայի ծախսի լիմիտները զգալի գերազանցելու հետևանքով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

2017 թվականին Ծառայության և ստորաբաժանումների կողմից էլեկտրաէներգիայի գերածախսերը

կՎտ/ժ

Ստորաբաժանում	Լիմիտ	Փաստ	Տարբերություն
ՀՀ փրկարար ծառայություն	39273	67660	28387
Արագածոտնի մարզային վարչության պահեստ	26000	46804	20804
Շիրակի մարզային փրկարարական վարչություն	50000	88257	38257
Լոռու մարզային փրկարարական վարչության Վանաձորի թիվ 1 և թիվ 2 հրշեջ փրկարարական ջոկատներ	59900	98113	38213
Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչություն	23000	67419	44419
Ընդամենը	**198173**	**368253**	**170080**

Ծառայության ստորաբաժանումները «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով գերազանցել են նաև բնական գազի ծախսի լիմիտները և թույլ են տվել 5,770.0 հազ. դրամի 41512.0 խմ գերածախս:

Ծառայությունը «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ստանձնել է լրացուցիչ պարտավորություններ, որի դիմաց վճարումները տարվա ընթացքում ուշացնելու արդյունքում կատարել է բյուջետային միջոցների 4,402.2 հազ. դրամի չնախատեսված ծախս

2017 թվականին Ծառայությունը նախատեսված ֆինանսավորումից ավելի ծախսված էլեկտրաէներգիայի և բնական գազի համար «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ստանձնել է լրացուցիչ պարտավորություններ, որի դիմաց վճարումները տարվա ընթացքում ուշացնելու համար մատակարար կազմակերպությունները հաշվարկել և գանձել են էլեկտրաէներգիայի գծով՝ 2,351.7 հազ. դրամի տույժ, բնական գազի գծով՝ 2,050.5 հազ. դրամի տույժ, և արդյունքում Ծառայությունը կատարել է բյուջետային միջոցների 4,402.2 հազ. դրամի չնախատեսված ծախս:

Ընդհանուր առմամբ, Ծառայությունը «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով 2017 թվականին թույլ է տվել 26,030.7 հազ. դրամի էլեկտրաէներգիայի և բնական գազի գերածախս, որի հետևանքով առաջացած կրեդիտորական պարտքը մարվել է «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածի չօգտագործված մնացորդից գումար վերաբաշխելու հաշվին:

«Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով Նախարարության բյուջետային հայտը անհրաժեշտ է հաշվարկել կենսաթոշակի անցնողների վերաբերյալ իրատեսական տվյալների հիման վրա:

2017 թվականին Ծառայությանը «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 157,589.5 հազ. դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 82,589.5 հազ. դրամ, իսկ առաջացած տարբերությունը վերաբաշխվել է այլ ծախսային հոդվածների և «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծրագրին: 2018 թվականին Ծառայությանը այդ հոդվածով պետական բյուջեից նախատեսված հատկացումը կրճատվել է 20,000.0 հազ. դրամով և կազմել է 137,589.5 հազ. դրամ: 2018 թվականի առաջին կիսամյակում փաստացի ծախսը կազմել է 20,422.0 հազ. դրամ, և հաշվի առնելով ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 28.12.2017թ. թիվ 1717-Ն որոշումով հաստատված այդ հոդվածով ծախսերի կիսամյակային համամասնությունը (35,773.3 հազ. դրամ), տարեվերջին առաջանալու է չօգտագործված զգալի մնացորդ: Հետագայում պետական բյուջեից հավելյալ հատկացումները և չօգտագործված մնացորդների առաջացումը բացառելու նպատակով «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով Նախարարության բյուջետային հայտը անհրաժեշտ է հաշվարկել կենսաթոշակի անցնողների վերաբերյալ իրատեսական տվյալների հիման վրա:

2017 թվականին Ծառայությունը «Տրանսպորտային նյութեր» հոդվածով բենզինի, դիզելային վառելիքի, քսայուղերի, անվադողերի, կուտակիչ մարտկոցների, ավտոպահեստամասերի գնման և ավտոմեքենաների ընթացիկ նորոգումների համար ֆինանսավորվել է 259,167.4 հազ. դրամ:

Ծառայությունը «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ կնքված 28.03.2017թ. թիվ ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-2 և 20.12.2017թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17-1 պայմանագրերով «ռեգուլյար» տեսակի բենզինը ձեռք է բերել մեկ լիտրը 335 դրամով, «պրեմիում» տեսակի բենզինը՝ 353 դրամով և «Մաքսիուր» ՍՊԸ-ի հետ կնքված 27.03.2017թ. թիվ ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-17-2-15/1-50-82 պայմանագրով մեկ լիտր դիզելային վառելիքը՝ 319.9 դրամով: Տարվա ընթացքում Ծառայությունը գնել է 330604 լիտր «ռեգուլյար» ու «պրեմիում» տեսակի բենզին՝ 112,857.1 հազ. դրամի և 256521 լիտր դիզելային վառելիք՝ 82,061.1 հազ. դրամի:

2017 և 2018 թվականներին կատարվել է ոչ նպատակային ծախս՝ Ծառայության կարիքների համար նախատեսված 11,745.2 հազ. դրամի 33000 լիտր բենզին ծախսվել է համակարգի այլ ավտոմեքենաների շահագործման համար

Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ 2017 թվականին Ծառայությունը 19966 լիտր բենզին հատկացրել է Նախարարության համակարգում հաշվառված և շահագործվող այլ ավտոմեքենաներին: 2018 թվականի առաջին չորս ամիսներին Ծառայությունը այդ ավտոմեքենաներին հատկացրել է ևս 6800 լիտր բենզին: Փաստորեն, 2017 և 2018 թվականներին կատարվել է ոչ նպատակային ծախս՝ Ծառայության կարիքների համար նախատեսված 11,745.2 հազ. դրամի 33000 լիտր բենզին ծախսվել է համակարգի այլ ավտոմեքենաների շահագործման համար:

2017թ. անհիմն դուրս է գրվել 492.5 հազ. դրամի 1470 լիտր «ռեգուլյար» տեսակի բենզին

Բացի այդ, նյութական պատասխանատու չհանդիսացող անձի կողմից միանձնյա ստորագրված իրավական հիմք չունեցող ակտով խոտհնձիչ մեքենաների և սան-մաքրման աշխատանքների համար Ծառայության պահեստից 2017 թվականին անհիմն դուրս է գրվել 492.5 հազ. դրամի 1470 լիտր «ռեգուլյար» տեսակի բենզին:

2017թ. որպես նվիրատվություն անանուն դուրս է գրվել 9,277.1 հազ. դրամի 29000 լիտր դիզելային վառելիք

2017 թվականի նոյեմբեր ամսին Ծառայությունը ելքի կարգագրով պահեստից, որպես նվիրատվություն, անանուն դուրս է գրել 9,277.1 հազ. դրամի 29000 լիտր դիզելային վառելիք: Հաշվեքննության ընթացքում ներկայացված փաստաթղթերով չի հիմնավորվում գործարքի նպատակը և դիզելային վառելիքի ծախսը:

Թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից ստացված 1,936.0 հազ. դրամի «պրեմիում» տեսակի բենզինը ավտոմեքենաներին չի բաշխվել, սակայն մնացորդ չի առաջացել

«01.01.-01.05.2018թ. Ծառայության ստորաբաժանումներին բաշխված վառելիքի մասին» հաշվետվության զննությամբ պարզվել է, որ 2018 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում պահեստից դուրս գրված ու թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից ստացված 1,936.0 հազ. դրամի «պրեմիում» տեսակի բենզինը ավտոմեքենաներին չի բաշխվել, սակայն, ըստ ծախսի վերաբերյալ առկա հիմքերի, բենզինի մնացորդ չի առաջացել և այդ քանակի բենզինի ծախսը չի հիմնավորվում:

«Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաների համար գնված 2,490.0 հազ. դրամի արգելակման սարքերի 20 լրակազմերը և 6,195.0 հազ. դրամի էլեկտրական համակարգի պահեստամասերի 35 լրակազմերը դուրս են գրվել այն ջոկատներին, որոնք «Իսուզու» մակնիշի հրշեջ ավտոմեքենաներ չունեն

2017 թվականին Ծառայությունը հրշեջ փրկարարական ավտոմեքենաների պահեստամասեր գնելու համար «Աբի» ՍՊԸ-ի հետ կնքել է 14.03.2017թ. թիվ ՊԸԱՊՁԲ-ԱԻՆ-17/3-2 պայմանագիրը՝ 13,830.0 հազ. դրամ արժեքով: Զննությամբ պարզվել է, որ պայմանագրով «Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաների համար գնված 2,490.0 հազ. դրամի արգելակման սարքերի 20 լրակազմերը և 6,195.0 հազ. դրամի էլեկտրական համակարգի պահեստամասերի 35 լրակազմերը Ծառայության պահեստից ելքի կարգագրերով դուրս են գրվել այն հրշեջ փրկարարական ջոկատներին, որոնք «Իսուզու» մակնիշի հրշեջ ավտոմեքենաներ չունեն: Փաստորեն, պայմանագրի շրջանակում «Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաների համար պահեստամասերի գնման պահանջը բացակայել է և կատարվել է 8,685.0 հազ. դրամի ոչ նպատակային ծախս:

Ծառայությունը «Այլ հարկեր» հոդվածից կատարել է ոչ նպատակային ծախս, գնում չհանդիսացող ծախսային հոդվածի հաշվին և առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերը պահպանելու, ձեռք է բերել գնումների պլանով չնախատեսված 21,387.4 հազ. դրամի ապրանքներ և ծառայություններ

2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը «Այլ հարկեր» հոդվածով պետական բյուջեից ֆինանսավորվել է համապատասխանաբար՝ 25,584.0 հազ. դրամ և 9,324.0 հազ. դրամ: Զննությամբ պարզվել է, որ Ծառայությունը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ. թիվ 5-Ն հրամանով «Այլ հարկեր» հոդվածով սահմանված ծախսերի ուղղություններին ոչ համապատասխան, հատկացված միջոցներից համապատասխանաբար՝ 15,406.2 հազ. դրամ և 5,981.2 հազ. դրամ ուղղել է ապրանքների և ծառայությունների գնումներին: Փաստորեն, Ծառայությունը կատարել է ոչ նպատակային ծախս, գնում չհանդիսացող ծախսային հոդվածի հաշվին և առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերը պահպանելու ձեռք է բերել գնումների պլանով չնախատեսված 21,387.4 հազ. դրամի ապրանքներ և ծառայություններ: Ընդ որում, այդ միջոցների հաշվին «Գագաթ» ՍՊԸ-ից գնված 2,847.3 հազ. դրամի համակարգչային սարքավորումների և «Արբրեն» ՍՊԸ-ից

գնված 239.9 հազ. դրամի ոգելից խմիչքների հանձնման ընդունման արձանագրությունները բացակայում են:

2017 թվականին Ծառայությունը «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով պետական բյուջեից ֆինանսավորվել է 89,774.6 հազ. դրամի չափով: Հատկացված միջոցների հաշվին գնվել է 79,287.0 հազ. դրամի հանդերձանք և 10,487.6 հազ. դրամի գրասենյակային նյութեր: 2018 թվականին այդ հոդվածով պետական բյուջեից Ծառայությանը նախատեսվել է հատկացնել 106,683.8 հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի առաջին կիսամյակում ֆինանսավորվել է 344.5 հազ. դրամ, որը կազմել է ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 28.12.2017թ. թիվ 1717-Ն որոշումով այդ հոդվածով հաստատված 38,962.5 հազ. դրամի ծախսերի կիսամյակային համամասնության 0.9%-ը: Ֆինանսավորված գումարը ուղղվել է գրասենյակային նյութերի գնումներին, իսկ հագուստի առաջին խմբաքանակի գնումը կատարվել է 2018 թվականի երրորդ եռամսյակում:

Ծառայությունը կատարել է ոչ նպատակային ծախս՝ Նախարարության համակարգի այլ ստորաբաժանումների աշխատողների գործուղման ծախսերին ուղղելով 14,503.3 հազ. դրամ

«Ներքին գործուղումներ» հոդվածով 2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը ֆինանսավորվել է համապատասխանաբար՝ 43,896.0 հազ. դրամ և 10,974.0 հազ. դրամ: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ հատկացված միջոցներից Ծառայությունը կատարել է ոչ նպատակային ծախս՝ համապատասխանաբար՝ 10,336.3 հազ. դրամ և 4,167.0 հազ. դրամ ուղղել է Նախարարության համակարգի այլ ստորաբաժանումների աշխատողների գործուղման ծախսերին:

Ծառայությունը 2017 թվականին «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով կատարել է 2,423.1 հազ. դրամի չհիմնավորված ծախս

«Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով Ծառայությունը 2017 թվականին ֆինանսավորվել է 4,991.7 հազ. դրամ, 2018 թվականի առաջին կիսամյակում՝ 603.3 հազ. դրամ: 2017 թվականին այդ հոդվածով հատկացված միջոցների հաշվին Ծառայությունը տարբեր կազմակերպություններից գնել է 142 շիշ ոգելից խմիչքներ՝ կոնյակ և օղի: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ գնված ոգելից խմիչքների հանձնման-ընդունման արձանագրությունները ու դրանց նպատակային օգտագործումը հիմնավորող փաստաթղթերը բացակայում են, և Ծառայությունը 2017 թվականին «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով կատարել է 2,423.1 հազ. դրամի չհիմնավորված ծախս:

Սեղմ ժամանակահատվածում առանց հիմնավորման 28 ավտոմեքենաների մեկ անգամից ավելի դիագնոստիկա անցնելու համար Ծառայությունը վճարել է 1,600.0 հազ. դրամ

«Մասնագիտական ծառայություններ» հոդվածով 2017 թվականին Ծառայությանը հատկացվել է 3,000.0 հազ. դրամ: Ծառայությունը «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի հետ կնքել է 3,000.0 հազ. դրամի 23.09.2017թ. թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-17/5-1 պայմանագիրը՝ «Իսուզու» մակնիշի հրշեջ փրկարարական ավտոմեքենաների դիագնոստիկայի համար՝ մեկ ավտոմեքենան 50.0 հազ. դրամ արժեքով: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ նույն տարվա նոյեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 14-ը 4 հրշեջ փրկարարական ավտոմեքենաներ անցել են դիագնոստիկա երեք անգամ, 24 ավտոմեքենա՝ երկու անգամ: Փաստորեն, սեղմ ժամանակահատվածում, առանց հիմնավորման, 28 ավտոմեքենաների մեկ անգամից ավելի դիագնոստիկա անցնելու համար Ծառայությունը «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին վճարել է 1,600.0 հազ. դրամ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության վերաբերյալ

ՀՀ կառավարության 14.02.2013թ. թիվ 134-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, որը հիմք ընդունելով, Տեսչությունը հաստատում է ռիսկի վրա հիմնված ստուգումների անցկացման ծրագիրը: 2017 թվականի ծրագրով նախատեսված էր տարածքային մարմինների կողմից իրականացնել ստուգումներ 496 կազմակերպություններում: Փաստացի ստուգումներ իրականացվել են միայն 58 կազմակերպություններում կամ ծրագրով ռիսկային համարված կազմակերպությունների 11.7%-ում (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Տեսչության 2017 թվականի ստուգումների ծրագրի կատարողականը և նշանակված տուգանքները

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություններ	Ստուգումներ		Ստուգման արդյունքում նշանակված տուգանք	
	ծրագիր	փաստացի	քանակ	գումար (հազ. դրամ)
Երևան քաղաքի	128	-	-	-
Շիրակի մարզի	31	1	1	30.0
Լոռու մարզի	41	-	-	-
Կոտայքի մարզի	40	-	-	-
Սյունիքի մարզի	37	1	1	25.0
Տավուշի մարզի	26	6	6	440.0
Արագածոտնի մարզի	19	2	2	80.0
Վայոց Ձորի մարզի	30	2	2	100.0
Արմավիրի մարզի	48	5	4	165.0
Արարատի մարզի	60	41	37	1,825.0
Գեղարքունիքի մարզի	36	-	-	-
Ընդամենը	**496**	**58**	**53**	**2,665.0**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017 թվականին Արարատի մարզի տեսչությունն անցկացրել է 41 ստուգումներ, կամ հաստատված ծրագիրը կատարել է 68%-ով, առանձին մարզային տեսչություններ անցկացրել են մեկից մինչև վեց ստուգում, իսկ Երևանի, Գեղարքունիքի, Լոռու և Կոտայքի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունները ծրագրով նախատեսված ստուգումներ ընդանրապես չեն անցկացրել: Ընդ որում, զննությամբ պարզվել է, որ ստուգումներն անցկացվել են միայն արտադրական վտանգավոր օբյեկտ հանդիսացող ԱԳԼՃԿ-ներում:

Տեսչությունների կողմից ստուգված բոլոր կազմակերպություններում տեխնիկական անվտանգության կանոնների խախտումներ չեն արձանագրվել, հայտնաբերվել են միայն հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից հիսնապատիկի չափով:

Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ արձանագրված խախտումների համար հարուցված 53 վարչական վարույթներով նշանակվել են տուգանքներ և տրվել են կարգադրագրեր հայտնաբերված հրդեհային նորմերի և կանոնների խախտումները վերացնելու համար, իսկ 5 վարույթներով տուգանքներ չեն նշանակվել և միայն տրվել են կարգադրագրեր:

2017 թվականին Տեսչության կողմից ստուգումների ծրագրի շրջանակում անցկացված ստուգումների արդյունքում պետական բյուջեի օգտին նշանակվել է 2,665.0 հազ. դրամ տուգանք:

2018 թվականի ստուգումների ծրագրով նախատեսված 473 կազմակերպություններից առաջին կիսամյակում ստուգումներ են անցկացվել 175 կազմակերպություններում: Հաշվեքննության ընթացքում զննում է իրականացվել Երևանի, Արարատի և Արմավիրի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունների կողմից ստուգումների արդյունքում հարուցված 49 վարչական վարույթների նկատմամբ: Տեսչության կողմից ստուգված բոլոր կազմակերպություններում հայտնաբերվել են հրդեհային անվտանգության կանոնների խախտումներ, սակայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքը 34 վարչական վարույթներով չի նշանակվել.

- Երևանի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից հարուցված բոլոր 20 վարչական վարույթներով տուգանք չի նշանակվել:
- Արմավիրի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից հարուցված 20 վարչական վարույթներից 13-ով նշանակվել է 565.0 հազ. դրամ տուգանք, 7 վարույթներով տուգանք չի նշանակել:
- Արարատի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից հարուցված 9 վարչական վարույթներից երկու վարույթներով նշանակվել է 100.0 հազ. դրամ տուգանք, 7 վարույթներով տուգանք չի նշանակել:

Տեսչությունը 39 վարույթներով, խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, տուգանք չի նշանակել /յուրաքանչյուր դեպքի համար նվազագույնը 25.0 հազ. դրամ/

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչության կողմից հաստատված ծրագրի շրջանակում անցկացված ստուգումների արդյունքում պետական բյուջեի օգտին նշանակվել է 3,960.0 հազ. դրամ տուգանք:

Փաստորեն, Տեսչությունը խախտումների առկայության դեպքում 2017 և 2018 թվականներին 68 վարույթներով որպես հարկադրանքի միջոց կիրառել է տուգանք, իսկ 39 վարույթներով, խախտելով

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի՝ «վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք», տուգանք չի նշանակել, որը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է նվազագույնը 25.0 հազ. դրամ (հավելված 1):

Կարգադրագրերով սահմանված ժամկետը ավարտվելուց հետո կարգադրագրերի կատարումը Տեսչության կողմից չի ստուգվել

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետական հրդեհային տեսչության պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով»: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ ստուգումների ընթացքում հայտնաբերված հրդեհային անվտանգության նորմերի և կանոնների խախտումները վերացնելու նպատակով Տեսչության կողմից բոլոր կազմակերպություններին պարտադիր կատարման համար տրվել են կարգադրագրեր, սակայն կարգադրագրերով սահմանված ժամկետը ավարտվելուց հետո դրանց կատարումը Տեսչության կողմից չի ստուգվել:

Տեսչությունը հրդեհների առաջացման դեպքերի համար հարուցված վարչական վարույթներով 2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում նշանակել է համապատասխանաբար՝ 12,340.0 հազ. դրամի և 1,920.0 հազ. դրամի տուգանք, որի դիմաց պետական բյուջե մուտք է եղել 10,240.0 հազ. դրամ:

2017թ. շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտներից 5948-ը չեն անցել տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննություն, որոնց շահագործողների նկատմամբ Տեսչությունը չի նշանակել տուգանք

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ»: Նույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է՝ «Սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով»:

Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ 2017 թվականին շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտներից 5948 օբյեկտ չեն անցել տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննությունը, ինչի մասին ռեեստրը վարողը ամեն ամիս գրություններով տեղեկացրել է Տեսչությանը: Սակայն, Տեսչությունը այդ օբյեկտները շահագործող կազմակերպությունների նկատմամբ չի հարուցել վարչական վարույթներ և չի նշանակել տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար 1,000.0 հազ. դրամ, կամ ընդամենը՝ 5,948,000.0 հազ. դրամ:

Տեսչությունը ռեեստրում գրանցման չներկայացնելու համար հակակարկտային կայանները տարիներ շարունակ շահագործող անձանց նկատմամբ չի հարուցել վարչական վարույթ և չի նշանակել յուրաքանչյուր դեպքի համար 1,000.0 հազ. դրամ տուգանք, կամ ընդամենը՝ 237,000.0 հազ. դրամ

Բացի այդ, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, «Սույն օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով»: Հաշվեքննության ընթացքում «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են արտադրական վտանգավոր օբյեկտ հանդիսացող 547 հակակարկտային կայաններ: Հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ այդ կայաններից արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված չեն 237 հակակարկտային կայանները (հավելված 2): Սակայն, Տեսչությունը ռեեստրում գրանցման չներկայացնելու համար հակակարկտային կայանները տարիներ շարունակ շահագործող անձանց նկատմամբ չի հարուցել վարչական վարույթ և չի նշանակել յուրաքանչյուր դեպքի համար 1,000.0 հազ. դրամ տուգանք, կամ ընդամենը՝ 237,000.0 հազ. դրամ:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումների համար Տեսչությունը 2017 թվականին նշանակել է 9,000.0 հազ. դրամ տուգանք, որից պետական բյուջե գանձվել է 1,000.0 հազ. դրամ, 3,000.0 հազ. դրամի տուգանքը բռնագանձելու համար ներկայացվել են դիմումներ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, իսկ 5,000.0 հազ. դրամի տուգանք նշանակելու որոշումները բողոքարկվել են և գտնվում են վարչական դատարանի վարույթում:

2018 թվականի առաջին կիսամյակում Տեսչության կողմից պետական բյուջեի օգտին նշանակվել է 32,500.0 հազ. դրամ տուգանք, որից պետական բյուջե գանձվել է 4,000.0 հազ. դրամ, իսկ 14,000.0 հազ. դրամի տուգանքները բռնագանձելու համար դիմումներ են ներկայացվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում Տեսչությունը պետական բյուջեի օգտին նշանակել է 62,385.0 հազ. դրամ տուգանք, որից պետական բյուջե մուտք է եղել 22,815.0 հազ. դրամ:

Փաստորեն, հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում առկա են բազմաթիվ իրավախախտումներ, իսկ Տեսչությունը, պահպանման ծախսերի համար առկա զգալի բյուջետային միջոցներով, թերի է կատարել իրեն վերապահված գործառույթները՝ ցածր է ռիսկի վրա հիմնված ստուգումների ծրագրի կատարողականը, թերի է վարչարարությունը և իրավախախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը:

«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ

2017 թվականին «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) 48 հաստիք թափուր էր, որի հաշվին առաջացած աշխատավարձի ֆոնդի 69,092.4 հազ. դրամ մնացորդը որպես պարգևատրում տրվել է ՊՈԱԿ-ի աշխատողներին: 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՊՈԱԿ-ում թափուր էր 62 հաստիք՝ 85,977.6 հազ. դրամ տարեկան աշխատավարձի ֆոնդով: Ընդ որում, առանձին հաստիքներ թափուր են շուրջ երկու տարի, մասնավորապես՝ Ապարանի ջրամբարի հիդրոօդերևութաբանական կայանի պետի, Մեղրիի օդերևութաբանական կայանի պետի և Լոռու ռադիոլոկացիոն հակակարկտային կայանի տեխնիկական միջոցների շահագործման բաժնի պետի հաստիքները: Հաշվի առնելով, որ թափուր հաստիքների առկայության պայմաններում, ըստ ներկայացված հաշվետվությունների, 2017 թվականին ՊՈԱԿ-ի կողմից պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքները ամբողջությամբ կատարվել են, բյուջետային միջոցները տնտեսելու նպատակով հաստիքացուցակը անհրաժեշտ է վերանայել և օպտիմալացնել:

ՀՀ կառավարության 07.10.2004թ. թիվ 1373-Ն որոշումով ՊՈԱԿ-ին հատկացվել է 5000քմ հողամաս Երևանի Նորք-Մարաշ թաղային համայնքի վարչական սահմաններում՝ «Արաբկիր» օդերևութաբանական կայանը վերատեղակայելու նպատակով: Կայանի կառուցման համար գումար չի նախատեսվել, և մինչև 2017 թվականը կայանը վերատեղակայելու համար աշխատանքներ չեն կատարվել:

ՊՈԱԿ-ը կայանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու համար կատարել է բյուջետային միջոցների 990.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս

2017 թվականին ֆիզիկական անձի կողմից գրավոր առաջարկվել է սեփական միջոցներով կառուցել կայանը՝ այդ հողամասից 2000քմ իրեն օտարելու դիմաց: Առաջարկված գործարքի վերաբերյալ պայմանագիր չի կնքվել, սակայն ՊՈԱԿ-ը «Արաբկիր» օդերևութաբանական կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու համար «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ կնքել է 15.11.2017թ. թիվ ԵՆՃԳ 23/17 պայմանագիրը՝ 990.0 հազ. դրամի, որը վճարվել է նախագծողին պայմանագրային պարտավորությունների կատարման դիմաց: Առ ստուգման պահը հողամասի օտարման վերաբերյալ պայմանագիր չի կնքվել և կայանը չի կառուցվել: Փաստորեն, ՊՈԱԿ-ը կայանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու համար կատարել է բյուջետային միջոցների 990.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս:

ՊՈԱԿ-ը Նախարարության կարիքների համար ավտոբուս ձեռք բերելու նպատակով բանկից ստացել է 8,013.0 հազ. դրամի վարկ՝ չունենալով նման իրավասություն

2017 թվականին և 2018 թվականի ինը ամիսներին ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցների հաշվին ՊՈԱԿ-ի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 34,154.9 հազ. դրամ և 37,840.2 հազ. դրամ: 2017 թվականի օգոստոսին ՊՈԱԿ-ը, անտեսելով ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1648-Ն որոշման պահանջը, ըստ որի՝ «պետական ոչ առևտրային կազմակերպությունները չեն կարող վերցնել և տրամադրել վարկեր կամ փոխառություններ», բանկից ստացել է 8,013.0 հազ. դրամի վարկ Նախարարության կարիքների համար ավտոբուս ձեռք բերելու նպատակով: 2017 և 2018 թվականներին, վարկի տոկոսը մարելու համար ՊՈԱԿ-ը արտաբյուջետային միջոցներից կատարել է 1,307.1 հազ. դրամի լրացուցիչ ծախս, իսկ վարկի մայր գումարը մարվել է ՊՈԱԿ-ի հաշվին առկա 11,484.6 եվրո և 6,180.0 ԱՄՆ դոլար արտարժութային միջոցների հաշվին: Ընդ որում, ՊՈԱԿ-ի կողմից 2017 և 2018 թվականների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների և ծախսերի վերաբերյալ Նախարարություն

ներկայացված ֆինանսական տեղեկանքներում արտարժույթը արտացոլված չի եղել և այդ գումարի չափով ֆինանսական տեղեկանքները անարժանահավատ են:

ՊՈԱԿ-ը արտաբյուջետային միջոցներից Նախարարության «ԱՌՆԱՊ» հիմնադրամին տրամադրել է 7,551.5 հազ. դրամ փոխառություն՝ չունենալով նման իրավասություն

Բացի այդ, թույլ տալով անհամապատասխանություն ՀՀ կառավարության որոշման պահանջի հետ, ՊՈԱԿ-ը 2016 թվականի նոյեմբեր ամսին արտաբյուջետային միջոցներից Նախարարության «ԱՌՆԱՊ» հիմնադրամին տրամադրել է 7,551.5 հազ. դրամ փոխառություն մինչև երեք ամիս ժամկետով, որը վերադարձվել է ինը ամիս ուշացումով՝ 2017 թվականի դեկտեմբեր ամսին:

ՀՀ վերահսկիչ պալատը 2010 թվականին իրականացրած վերահսկողության ընթացքում ուսումնասիրել էր «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հակակարկտային կայանների միջոցով իրականացվող հակակարկտային պաշտպանության արդյունավետությունը: Այդ ժամանակ «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում շահագործում էր գազագեներատորային մեթոդով աշխատող 42 հակակարկտային կայաններ:

2010 թվականին իրականացրած վերահսկողության ընթացքում «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի գազագեներատորային մեթոդով աշխատող հակակարկտային կայանների տեխնիկատնտեսական ցուցանիշները և արդյունավետությունը գնահատելու արդյունքում ՀՀ վերահսկիչ պալատը եզրակացրել էր.

- Աշխարհում կիրառվող հակակարկտային պաշտպանության մեթոդներից ամենաարդյունավետը հրթիռային ռեագենտային մեթոդով աշխատող սարքն է, որի արդյունավետությունը Հայաստանում շահագործման տարիներին կազմում էր 90% և ավելի:
- Հակակարկտային պաշտպանության գազագեներատորային և հրթիռային ռեագենտային մեթոդների տեխնիկատնտեսական ցուցանիշների ու հաշվարկային անհրաժեշտ ծախսերի համեմատությունը ցույց է տալիս, որ 100000 հա տարածքի համար հաշվարկով գազագեներատորային մեթոդը մոտ 10 անգամ ավելի ծախսատար է: Հետևաբար, պետական բյուջեից միջոցներով վնասաբեր կարկուտներից հակակարկտային պաշտպա-
- նության համար առավել արդյունավետ է հրթիռային ռեագենտային մեթոդի կիրառումը:

Այդ եզրակացության հիման վրա ՀՀ վերահսկիչ պալատը առաջարկել էր ՀՀ կառավարությանը՝ կարկուտներից վտանգված մարզերում ապահովել առավել արդյունավետ միջոցներով (հրթիռային ռեագենտային) հակակարկտային պաշտպանությունը, որին մինչև 2017 թվականը արձագանք չի եղել:

Անցած տարիների ընթացքում շարունակվել է գազագեներատորային մեթոդով աշխատող սարքերով հակակարկտային պաշտպանության իրականացումը և ներկա դրությամբ այդ կայանների թիվը 2010 թվականի նկատմամբ ավելացել է 13 ամգամ և այժմ ՀՀ տարածքում տեղակայված են 547 կայաններ, այդ թվում՝ ՊՈԱԿ-ի կողմից շահագործվող 234 կայաններ, որից 2013 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին գնված 280,000.0 հազ. դրամի 80 հատ հակակարկտային կայանները հաշվառված չեն ՊՈԱԿ-ի հաշվեկշռում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Գազագեներատորային հակակարկտային կայանների տեղակայումը ՀՀ մարզերում

Մարզ	Սեփականատեր		
	ՊՈԱԿ	Համայնք	Այլ անձ
Արագածոտն	38	17	18
Արարատ	66	33	-
Արմավիր	118	78	11
Գեղարքունիք	-	-	-
Լոռի	12	22	7
Կոտայք	-	12	8
Շիրակ	-	87	-
Սյունիք	-	-	-
Վայոց Ձոր	-	2	5
Տավուշ	-	13	-
Ընդամենը	**234**	**264**	**49**

Հաշվեքննության շրջանակում ՀՀ գյուղատնտեսության նախարարությանից, արտաքին հաստատման ընթացակարգի կիրառությամբ, ստացվել է տեղեկատվություն վերջին տարիներին կարկտի պատճառված վնասների վերաբերյալ (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

2015-2018 թվականներին գյուղատնտեսությանը կարկտից պատճառված վնասը

հազ. դրամ

Մարզ	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Արագածոտն	208,335.9	7,142,050.0	3,681,035.0	36,881.4
Արարատ	1,669,695.4	194,930.0	8,772.0	267,515.6
Արմավիր	3,149,850.0	23,008,132.0	4,950,225.0	4,863,819.1
Գեղարքունիք	535,600.0	109,520.0	155,073.0	167,543.7
Լոռի	1,032,907.0	356,124.0	109,273.0	149,966.5
Կոտայք	-	778,747.0	29,995.0	324,073.3
Շիրակ	692,363.5	1,350,306.0	658,323.0	2,550,732.3
Սյունիք	-	125,555.0	1,561,119.0	
Վայոց Ձոր	242,200.0	-	126,193.0	26,128.9
Տավուշ	293,764.0	503,445.0	926,883.0	318,593.0
Ընդամենը	**7,824,715.8**	**33,568,809.0**	**12,206,891.0**	**8,705,253.8**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վնասաբեր կարկուտներից ամենամեծ վնասներ կրել է Արմավիրի մարզի գյուղատնտեսությունը, որտեղ ներկա դրությամբ տեղակայված են թվով ամենաշատ՝ 207 հակակարկտային կայաններ:

Փաստորեն, նախորդ վերահսկողության արդյունքում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից հրթիռային եղանակով հակակարկտային պաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունը հաշվի չառնելու հետևանքով միայն ՊՈԱԿ-ի հաշվեկշռում առկա 154 հակակարկտային կայանների ձեռք բերման համար (առանց դրանց շահագործման և սպասարկման ծախսերի) ծախսվել է 1,481,440.8 հազ. դրամ բյուջետային միջոցներ, իսկ գյուղատնտեսությունը միայն 2015 թվականից մինչև 2018 թվականը կրել է 60 մլրդ դրամից ավելի վնասներ:

Այժմ տարբեր երկրներում մշակաբույսերի տեղային հակակարկտային պաշտպանությունը իրականացնելու համար առանձին ֆերմերային տնտեսություններ օգտագործում են հատուկ ցանցեր, սակայն խնդրին համապարփակ լուծում տալու համար առավել արդյունավետ է հրթիռային

ռեագենտային մեթոդի կիրառումը, և նպատակահարմար է ձեռնարկել միջոցներ համապատասխան սարքերով հակակարկտային պաշտպանությունը Հանրապետությունում իրականացնելու համար:

ՀՀ կառավարության 11.05.2017թ. թիվ 533-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից Նախարարությանը հատկացվել է 75,949.4 հազ. դրամ, որը ամբողջությամբ ուղղվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ում հակակարկտային պաշտպանության նոր՝ հրթիռային համակարգի ներդրման և ռադիոլոկացիոն կայանների արդիականացման նպատակին: Ստուգման պահի դրությամբ ծրագրի շրջանակում գնվել և արդեն իսկ փորձարկվում են ռուսական արտադրության հակակարկտային պաշտպանության երկու հրթիռային կայաններ՝ հատը 8,724.2 հազ. դրամ արժեքով և հրթիռներ (մատակարարի կողմից ևս մեկ կայան տրվել է որպես նվիրատվություն):

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ

Կենտրոնը դրամաշնորհի պայմանագրով հատկացված միջոցների հաշվին պետական պատվերը երեք եռամսյակների ընթացքում կատարել է թերի, որի համար պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել

Դրամաշնորհի պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվություններից պարզվել է, որ 2017 թվականին պայմանագրային պարտավորությունների շրջանակներում «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) մշակել և ներկայացրել է հաստատման տեխնիկական անվտանգության երկու կանոնակարգեր, որոնք սակայն առ ստուգման պահը ՀՀ կառավարության կողմից չեն հաստատվել: 2018 թվականի դրամաշնորհի պայմանագրով ևս նախատեսվել է տեխնիկական անվտանգության ոլորտի կարգավորման նպատակով իրավական ակտերի մշակում, սակայն 2018 թվականի երեք եռամսյակների հաշվետվությունների համաձայն՝ Կենտրոնը կանոնակարգերի մշակման աշխատանքներ չի կատարել:

ՀՀ կառավարության 23.04.2010թ. թիվ 566-Ն որոշումով հաստատվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի օրինակելի ձևը, ըստ որի՝ պայմանագրերով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված

միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի մեկ տոկոսի չափով: Սակայն, Նախարարության և Կենտրոնի միջև կնքված դրամաշնորհի պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի ձևի պահանջներին՝ անորոշ է կողմերի պատասխանատվությունը պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: Փաստորեն, Կենտրոնը դրամաշնորհի պայմանագրով հատկացված միջոցների հաշվին պետական պատվերը երեք եռամսյակների ընթացքում կատարել է թերի, որի համար պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել: Բացի այդ, պայմանագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել հաստատված օրինակելի ձևին ու վերանայել հատկացվող դրամաշնորհի չափը:

Ստուգմամբ պարզվել է, որ հատկացված միջոցների հաշվին ստանձնած բոլոր պարտավորությունների կատարման արդյունքում առաջացել է 1,232.9 հազ. դրամ չօգտագործված մնացորդ, որը ենթակա է վերադարձման պետական բյուջե

ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 165-Ն և 13.07.2017թ. թիվ 803-Ն որոշումներով Կենտրոնին «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգերում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությանը աջակցելու համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է գումարային 163,185.4 հազ. դրամ: Հատկացված գումարներն ուղղվել են «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում փաստացի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերին: Ստուգմամբ պարզվել է, որ 2017 թվականին հատկացված գումարներից տարվա ընթացքում ծախսերը կազմել են 115,363.9 հազ. դրամ, ևս 46,588.6 հազ. դրամ ծախսվել է 2018 թվականի առաջին չորս ամիսներին: Ստուգմամբ պարզվել է, որ հատկացված միջոցների հաշվին ստանձնած բոլոր պարտավորությունների կատարման արդյունքում առաջացել է 1,232.9 հազ. դրամ չօգտագործված մնացորդ, որը ենթակա է վերադարձման պետական բյուջե:

2018 թվականի հունվարի 1-ից «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում փաստացի աշխատած աշխատողների աշխատավարձերի և դրանց հավասարեցված այլ վճարների վճարման նպատակով ՀՀ կառավարության 21.06.2018թ. թիվ 789-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 166,784.7 հազ. դրամ, որից 125,235.7 հազ. դրամը Կենտրոնը ստացել է 2018 թվականի առաջին ինը ամիսների ընթացքում:

2017 թվականին Կենտրոնի եկամուտները կազմել են 713,631.0 հազ. դրամ, և հաշվի առնելով տարեսկզբի մնացորդը՝ 1,122.9 հազ. դրամ, դրամական

Նախարարությանը ներկայացված Կենտրոնի 2018 թվականի ինը ամիսների «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների հոսքերի մասին» հաշվետվությունը անարժանահավատ է

միջոցների տարեվերջի մնացորդը կազմել է 56,718.6 հազ. դրամ: Կենտրոնի կողմից Նախարարությանը ներկայացված՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների հոսքերի մասին» հաշվետվություններից պարզվել է, որ 2018 թվականի ինը ամիսների հաշվետվությունում տարեսկզբի մնացորդը արտացոլվել է 8,705.0 հազ. դրամ, կամ 48,013.6 հազ. դրամ պակաս: Հաշվետվությունում սխալը առաջացել է Կենտրոնի բանկային հաշվին առկա «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում փաստացի աշխատողների աշխատավարձերի համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված 2017 թվականի տարեվերջի չօգտագործված մնացորդի հաշվին: Բացի այդ, հաշվետվությունում որպես եկամուտ նաև արտացոլված չէ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2018 թվականին ստացված 125,235.7 հազ. դրամը, որը սակայն արտացոլված է հաշվետվության ծախսերում: Արդյունքում, Կենտրոնի դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի ավարտին 76,710.0 հազ. դրամի փոխարեն կազմել է «-96,539.3 հազ. դրամ», կամ խեղաթյուրումը կազմել է 173,249.3 հազ. դրամ: Փաստորեն, Նախարարությանը ներկայացված Կենտրոնի 2018 թվականի ինը ամիսների «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների հոսքերի մասին» հաշվետվությունը անարժանահավատ է: Դրամական միջոցների հոսքերի սխալ հաշվառմանը կարող էր նպաստել այն, որ Կենտրոնը ֆինանսական գործունեությունը իրականացնում է առանց անհրաժեշտության վեց բանկերում բացված ինը բանկային հաշիվների միջոցով:

2018 թվականին հաստատված հաստիքացուցակով Կենտրոնի աշխատողների թիվը կազմում է 74 միավոր, սակայն դրանցից 33-ը փաստացի աշխատում են Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնում և չեն առնչվում Կենտրոնի կողմից իրականացվող գործառույթներին

2018 թվականին հաստատված հաստիքացուցակով Կենտրոնի աշխատողների թիվը կազմում է 74 միավոր՝ 236,331.6 հազ. դրամ տարեկան աշխատավարձի ֆոնդով: Հաստիքացուցակի 33 միավոր փաստացի աշխատում են Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնում և չեն առնչվում Կենտրոնի կողմից իրականացվող գործառույթներին: Բացի այդ, 2017 և 2018 թվականներին ՊՈԱԿ-ում աշխատել և վարձատրվել են տարեկան 50-ից ավելի պայմանագրային աշխատողներ: Փաստորեն,

ՊՈԱԿ-ը իր գործառույթները իրականացնում է 41 հաստիքային աշխատողների և դրանց թիվը գերազանցող պայմանագրային աշխատողների միջոցով:

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներով պայմանավորված ՊՈԱԿ-ի աշխատողների համար սահմանված պաշտոնային դրույքաչափերը մինչև 4.2 անգամ (բաժնի պետի համար) գերազանցում են Նախարարության համակարգի այլ ՊՈԱԿ-ներում նույն պաշտոններ զբաղեցնող աշխատողների պաշտոնային դրույքաչափերը (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Նախարարության ՊՈԱԿ-ների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը

հազ. դրամ

ՊՈԱԿ-ի անվանում	Պաշտոն						
	Տնօրեն	Տնօրենի տեղակալ	Տնօրենի խորհրդական	Գլխավոր հաշվապահ	Բաժնի պետ	Գլխավոր մասնագետ	Առաջատար մասնագետ
«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	660.0	520.0	350.0	470.0	340.0	290.0	240.0
«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ	390.0	320.0	170.0	240.0	120.0 150.0	113.0 155.0	107.0
«Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ	300.0	270.0	240.0	235.0	80.0 175.0	140.0 160.0	80.0 123.5
«Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ	250.0	220.0	200.0	190.0	130.0	120.0	110.0

Կենտրոնը աշխատավարձի ֆոնդից 2017 և 2018 թվականներին կատարել է 19,287.7 հազ. դրամի չհիմնավորված ծախս

Ստուգմամբ պարզվել է, որ բացի պաշտոնային դրույքաչափերով սահմանված աշխատավարձից Կենտրոնի աշխատողներին 2017 թվականի հունիս ամսից սկսած Կենտրոնի տնօրենի հրամաններով յուրաքանչյուր ամիս վճարվել են հավելավճարներ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ պարբերության համաձայն՝ «Հավելավճարը սույն օրենսգրքով, օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրացուցիչ վարձատրությունն է, որը վճարվում է որակավորման (դասային, դիվանագիտական, գիտական աստիճան,

կոչում և այլն), աշխատանքային ստաժի համար»: Կենտրոնի աշխատողներին հավելավճարների վճարումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի այդ դրույթով չի հիմնավորվում, և փաստորեն, Կենտրոնը աշխատավարձի ֆոնդից 2017 և 2018 թվականներին կատարել է 19,287.7 հազ. դրամի չհիմնավորված ծախս:

2017թ. Կենտրոնը Նախարարության կարիքների համար ավտոբուս ձեռք բերելու նպատակով բանկից ստացել է 8,000.0 հազ. դրամի վարկ՝ չունենալով նման իրավասություն

2017 թվականի սեպտեմբերին Կենտրոնը բանկից ստացել է 8,000.0 հազ. դրամի վարկ Նախարարության կարիքների համար ավտոբուս ձեռք բերելու նպատակով, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1648-Ն որոշման 2-րդ կետի պահանջին, այն է՝ «պետական ոչ առևտրային կազմակերպությունները չեն կարող վերցնել և տրամադրել վարկեր կամ փոխառություններ»: Միաժամանակ, վարկի տոկոսը մարելու համար Կենտրոնը 2017 և 2018 թվականներին արտաբյուջետային միջոցներից կատարել է 402.8 հազ. դրամի լրացուցիչ ծախս:

Կենտրոնը առանց պայմանագրային պարտավորություններ ունենալու կատարել է 2,370.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս

2017 և 2018 թվականներին Կենտրոնը «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ին սննդի կազմակերպման ծառայությունների համար հաշիվ ապրանքագրերով վճարել է համապատասխանաբար՝ 874.0 հազ. դրամ և 1,496.0 հազ. դրամ: Ստուգման ընթացքում Կենտրոնը որպես վճարումների հիմք ներկայացրել է Նախարարության և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի միջև կնքված 21.04.2017թ. թիվ 17/1 պայմանագիրը, որով Նախարարությունը սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով ընկերությանը անհատույց օգտագործման է հանձնել տարածքներ: Փաստացի, այդ պայմանագրով Կենտրոնը և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ն որևէ փոխադարձ պարտավորություն չունեն: Հետևաբար, Կենտրոնը առանց պայմանագրային պարտավորություններ ունենալու, կատարել է 2,370.0 հազ. դրամի չհիմնավորված ծախս:

2017 թվականի հոկտեմբերի 6-ին ԱՊՀ գործադիր կոմիտեն դիմել է ՀՀ կառավարությանը՝ ԱՊՀ մասնակից պետությունների արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի 2018 թվականի հերթական նիստը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու հնարավորությունը քննարկելու համար: Միջոցառումը կայացել է Ծաղկաձոր քաղաքում սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 4-ը: Խորհրդի նիստին արտասահմանյան պատվիրակությունների անդամների թիվը կազմել է 20 մարդ, Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամների թիվը՝ 7 մարդ, որից 6-ը՝ Կենտրոնի

աշխատողներ: Բացի պատվիրակության անդամներից, նիստին որպես մասնակիցներ ներառվել են Կենտրոնի ևս 26 աշխատողներ, որով միջոցառման մասնակիցների թիվը կրկնապատկվել է:

Ստուգմամբ պարզվել է, որ միջոցառման համար 9,164.1 հազ. դրամի ծախսը կատարվել է Կենտրոնի միջոցների հաշվին, որից 4,212.0 հազ. դրամ վճարվել է հյուրանոցային ծառայությունների համար, այդ թվում՝ երեք օրվա հյուրանոցային ծառայություն մատուցվել է 49 մարդու: Նիստի մասնակիցների սննդի և սուրճի ընդմիջումների համար ծախսը կազմել է 2,461.6 հազ. դրամ, մասնակիցներին հուշանվերներ և ոգելից խմիչքներ տրամադրելու համար՝ 1,088.0 հազ. դրամ, գրասենյակային ապրանքների և դահլիճի դիզայնի համար՝ 682.5 հազ. դրամ, տրանսպորտային միջոցների վարձակալության համար՝ 480.0 հազ. դրամ և լաստանավով զբոսանքի համար՝ 240.0 հազ. դրամ:

ԱՊՀ մասնակից պետությունների արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի նիստի ընթացքում հյուրանոցային ծառայությունների և սննդի համար ծախսված 6,673.6 հազ. դրամի 50%-ի չափով կատարվել է ոչ նպատակային ծախս

Միջոցառմանը Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում չընդգրկված Կենտրոնի մնացած 26 աշխատողների մասնակցության անհրաժեշտությունը չի հիմնավորվում, և փաստորեն ԱՊՀ մասնակից պետությունների արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի նիստի ընթացքում հյուրանոցային ծառայությունների և սննդի համար ծախսված 6,673.6 հազ. դրամի 50%-ի չափով կատարվել է ոչ նպատակային ծախս: Բացի այդ, չի հիմնավորվում Կենտրոնի կողմից խորհրդի նիստին գործուղված արտասահմանյան պատվիրակությունների անդամների փոխարեն գիշերավարձերի վճարումը:

Առկա է անվտանգությանը սպառնացող տեխնածին վթարների ռիսկ

Ստուգման ընթացքում Կենտրոնի կողմից տրամադրվել է Երևան քաղաքում գտնվող կառուցապատման օբյեկտներում տեղակայված վերամբարձ կռունկների տեխնիկական փորձաքննությունների վերաբերյալ տեղեկատվություն: Պարզվել է, որ քաղաքում տարբեր կառուցապատման օբյեկտներում տեղակայված 37 հատ վերամբարձ կռունկներ տարիներ շարունակ չեն շահագործվում և չեն անցնում տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննություն, ինչը հիմնականում պայմանավորված է կառուցապատողներին սնանկ ճանաչելու գործընթացներով: Փաստորեն, առկա է անվտանգությանը սպառնացող տեխնածին վթարների ռիսկ

և անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ այդ վերամբարձ կռունկների տեխնիկական վիճակը փորձաքննության միջոցով պարզելու համար:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի վերաբերյալ

Նախարարությանը պետական բյուջեի՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծրագրով 2017 թվականին նախատեսվել է հատկացնել 1,177,757.1 հազ. դրամ, ֆինանսավորվել է 1,195,055.0 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ֆինանսավորումը 2017 թվականի պետական բյուջեից

հազ. դրամ

Հոդվածի անվանում	Տարեկան բյուջե	Տարեկան ճշտված բյուջե	Ֆինանսավորում	
			գումար	%-ը ընդամենում
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	978,510.0	974,367.0	974,367.0	81.5
Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	91,395.3	91,395.3	91,395.3	7.6
Էներգետիկ ծառայություններ	52,739.0	81,277.4	81,277.4	6.8
Կոմունալ ծառայություններ	602.7	602.7	-	-
Կապի ծառայություններ	14,113.2	13,437.3	12,157.3	1.0
Ապահովագրական ծախսեր	640.0	640.0	640.0	0.1
Գործուղումների և շրջագայության ծախսեր	4,691.7	4,691.7	4,691.7	0.4
Համակարգչային ծառայություններ	2,624.0	2,624.0	1,386.6	0.1
Տեղեկատվական ծառայություն	1,677.0	1,677.0	1,621.3	0.1
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	6,255.0	6,255.0	6,252.2	0.5
Գրասենյակային նյութեր և հագուստ	4,289.7	4,289.7	4,037.7	0.3
Տրանսպորտային նյութեր	13,969.0	13,363.0	13,361.5	1.1
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4,687.9	4,687.9	2,305.7	0.2
Պարտադիր վճարներ	1,562.6	1,562.6	1,561.2	0.1
Ընդամենը	**1,177,757.1**	**1,200,870.6**	**1,195,055.0**	**100.0**

2017 թվականին Նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների 89.2%-ը ծախսվել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» ու «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրումներ» հոդվածներով, որը 2018 թվականի առաջին կիսամյակում ստուգվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից և արձանագրվել են խոշոր չափերի ֆինանսական խախտումներ: Հաշվի առնելով մնացած հոդվածներով կատարված ծախսերի ծավալները, զննության համար էական են համարվել Նախարարության տարեկան ծախսերի 1%-ը գերազանցող ծախսերը՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ 6.8% և «Տրանսպորտային նյութեր» հոդվածով՝ 1.1%:

ՀՀ կառավարության որոշումներով Նախարարությանը 2017 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 409,642.1 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

2017 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարներ

ՀՀ կառավարության որոշում	Գումար (հազ. դրամ)	Նպատակ
23.02.2017թ. թիվ 165-Ն	76,407.7	«Նաիրիտ գործարան» ՓԲԸ նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանության իրականացմանն աջակցելու համար
13.07.2017թ. թիվ 803-Ն	86,777.7	«Նաիրիտ գործարան» ՓԲԸ նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանության իրականացմանն աջակցելու համար
11.05.2017թ. թիվ 533-Ն	75,949.4	Հակակարկտային պաշտպանության նոր հրթիռային համակարգի ներդրման պիլոտային ծրագիր
07.09.2017թ. թիվ 1112-Ն	13,335.5	Անվտանգության բարձր տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսի կազմակերպման համար
05.10.2017թ. թիվ 1251-Ն	28,000.0	Գյումրի քաղաքի Նախարարության մասնաշենքի վերանորոգում
30.11.2017թ. թիվ 1518-Ն	77,000.0	28 միավոր «Իսուզու» հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգումների ծախսեր
30.11.2017թ. թիվ 1518-Ն	6,000.0	Վառելիքի և քսայուղերի գնում
30.11.2017թ. թիվ 1583-Ն	4,767.5	ՌԴ փրկարարական խմբի ՀՀ ժամանելու հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար
14.12.2017թ. թիվ 1610-Ն	38,602.3	Օգոստոսի 12-ից մինչև 21-ը անտառային հրդեհաշիջման ծախսերը փոխհատուցելու համար
14.12.2017թ. թիվ 1600-Ն	2,802.0	ՀՀ փրկարար ծառայության պատվիրակության Վրաստան գործուղման հետ կապված ծախսերի համար
Ընդամենը	**409,642.1**	

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1251-Ն որոշումով Գյումրի քաղաքի Նախարարության մասնաշենքի վերանորոգման համար հատկացվել է 28,000.0 հազ. դրամ, որի հաշվին իրականացված շինարարական աշխատանքները ստուգվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից, որի արդյունքում արձանագրվել են ֆինանսական խախտումներ:

ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 165-Ն և 13.07.2017թ. թիվ 803-Ն որոշումներով հատկացված 163,185.4 հազ. դրամը Նախարարությունը «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությանը ֆինանսական աջակցելու համար պայմանագրով ամբողջությամբ փոխանցել է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին:

ՀՀ կառավարության 11.05.2017թ. թիվ 533-Ն որոշումով պահուստային ֆոնդից Նախարարությանը հատկացվել է 75,949.4 հազ. դրամ, որը ամբողջությամբ ուղղվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ում հակակարկտային պաշտպանության նոր հրթիռային համակարգի ներդրման նպատակով:

ՀՀ կառավարության 14.12.2017թ. թիվ 1610-Ն որոշումով պահուստային ֆոնդից Նախարարությանը հատկացվել է 38,602.3 հազ. դրամ՝ 2017 թվականի օգոստոսի 12-ից մինչև 21-ը բռնկված անտառային հրդեհաշիջման աշխատանքների կատարման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Հաշվեքննության ընթացքում կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը ներկայացվել է ծանոթացման ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գլխավոր քարտուղարին: ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացվել են պարզաբանումներ, որոնք ընդունվել են մասնակի:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության վերաբերյալ

Ծառայությանը պետական բյուջեի՝ «Փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում» ծրագրով 2017 թվականին նախատեսվել է հատկացնել 7,430,339.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 7,392,457.1 հազ. դրամ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Փրկարար ծառայության ֆինանսավորումը 2017 թվականի պետական բյուջեից

հազ. դրամ

Հոդվածի անվանում	Տարեկան բյուջե	Տարեկան ճշտված բյուջե	Ֆինանսավորում	
			գումար	%-ը ընդամենում
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	6,617,590.6	6,617,590.6	6,617,323.9	89.5
Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17,075.4	17,075.4	17,075.4	0.2
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	-	590.0	587.9	0.01
Էներգետիկ ծառայություններ	96,861.7	122,892.4	122,892.4	1.7
Կոմունալ ծառայություններ	19,039.4	19,039.4	19,039.4	0.3
Կապի ծառայություններ	33,326.8	69,424.5	69,410.9	0.9
Ապահովագրական ծախսեր	12,120.0	12,120.0	12,120.0	0.2
Գույքի և սարքավորումների վարձակալություն	8,376.0	8,376.0	7,340.6	0.1
Ներքին գործուղումներ	43,896.0	43,896.0	43,896.0	0.6
Համակարգչային ծառայություններ	1,822.0	1,822.0	1,455.9	0.02
Տեղեկատվական ծառայություն	2,000.0	2,000.0	844.0	0.01
Ներկայացուցչական ծախսեր	5,000.0	5,000.0	4,991.7	0.1
Մասնագիտական ծառայություններ	3,000.0	3,000.0	3,000.0	0.04
Գրասենյակային նյութեր և հագուստ	92,683.8	91,097.8	89,774.6	1.2
Գյուղատնտեսական ապրանքներ	2,038.5	1,548.5	1,548.5	0.02
Տրանսպորտային նյութեր	264,862.9	259,167.6	259,167.4	3.5
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	667.6	667.6	560.5	0.01
Հատուկ նպատակային այլ նյութեր	26,805.2	14,495.7	14,495.7	0.2
Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	157,589.5	87,839.1	82,589.5	1.1
Այլ հարկեր	25,584.0	25,584.0	25,584.0	0.3
Ընդամենը	**7,430,339.4**	**7,403,226.6**	**7,392,457.1**	**100.0**

2017 թվականին Ծառայությանը պետական բյուջեից հատկացված միջոցների 89.7%-ը ծախսվել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» և «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրումներ» հոդվածներով, որը 2018 թվականի առաջին կիսամյակում ստուգվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից և արձանագրվել են խոշոր չափերի ֆինանսական խախտումներ: Հաշվի առնելով մնացած հոդվածներով կատարված ծախսերի ծավալները, զննության համար էական են համարվել Ծառայության տարեկան ծախսերի 1%-ը գերազանցող ծախսերը՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ 1.7%, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով՝ 1.2%, «Տրանսպորտային նյութեր» հոդվածով՝ 3.5% և «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով՝ 1.1%: Ռիսկային են համարվել նաև Ծառայության հիմնական գործառույթներին չառնչվող «Ներքին

գործուղումներ», «Ներկայացուցչական ծախսեր», «Այլ հարկեր» և «Մասնագիտական ծառայություններ» հոդվածներով կատարված ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը ներկայացվել է ծանոթացման Փրկարար ծառայության տնօրենին: ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացվել են պարզաբանումներ, որոնք չեն ընդունվել, բացառությամբ՝ երեք աշխատողների գործուղման ծախսի վերաբերյալ գրառմանը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության վերաբերյալ

ՀՀ կառավարության 10.03.2005թ. թիվ 383-Ն որոշմամբ հաստատվել է Տեսչության կանոնադրությունը, համաձայն որի Տեսչությունը իրականացնում է օրենքով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը վերապահված վերահսկողական գործառույթները և կիրառում է պատասխանատվության միջոցներ հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում: Տեսչության կազմում գործել են չորս կառուցվածքային ստորաբաժանումներ (բաժիններ)՝ հրդեհային և տեխնիկական անվտանգության, հետաքննության և վարչական վարույթների, նորմատիվ տեխնիկական աշխատանքների և հրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության, ինչպես նաև տասնմեկ տարածքային մարմիններ՝ Երևանի ու մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություններ: Տեսչության հաստիքացուցակը կազմել է քաղաքացիական ծառայության 154 և տեխնիկական անձնակազմի 14 հաստիքային միավորներ, որոնց վարձատրության համար 2017 թվականին ծախսը կազմել է շուրջ 300,000.0 հազ. դրամ:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտները հաշվառելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները գրառելու, վերլուծելու նպատակով լիազոր մարմինը վարում է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը»: Ըստ ռեեստրը վարող՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2017 թվականին գրանցվել են 561 արտադրական վտանգավոր նոր օբյեկտներ և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ռեեստրում հաշվառված է 18752 արտադրական վտանգավոր օբյեկտ, որից շահագործվող՝ 16778 օբյեկտ:

2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքը և ստեղծվել է ՀՀ կառավարության ենթակա Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը: ՀՀ վարչապետի 11.06.2018թ. թիվ 730-Լ որոշմամբ հաստատվել է այդ տեսչական մարմնի կանոնադրությունը, ըստ որի տեսչական մարմինը օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում: Ստեղծված տեսչական մարմնին անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտի նկատմամբ պատշաճ ու արդյունավետ վերահսկողություն և հսկողություն իրականացնելու համար:

Հաշվեքննության ընթացքում կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը ներկայացվել է ծանոթացման Տեսչության պետին: ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացվել են պարզաբանումներ, որոնք արձանագրված անհամապատասխանությունների առումով համարվել են ոչ էական:

«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ

ՊՈԱԿ-ին 2017 թվականին պետական բյուջեի «Հիդրոօդերևութաբանական ծառայություններ» հոդվածով որպես պետական աջակցություն ֆինանսավորվել է 1,161,252.3 հազ. դրամ: 2017 թվականի տարեսկզբին պետական բյուջեից հատկացված միջոցների մնացորդը

կազմել էր 14,518.6 հազ. դրամ: Տարվա ընթացքում ՊՈԱԿ-ի ծախսը կազմել է 1,156,870.2 հազ. դրամ և տարեվերջին առաջացել է պետական բյուջեից հատկացված միջոցների 18,900.7 հազ. դրամ չօգտագործված մնացորդ: 2018 թվականի ինը ամիսներին ՊՈԱԿ-ին ֆինանսավորվել է պետական բյուջեի համամասնություններով նախատեսված 714,133.4 հազ. դրամ:

2017 թվականին և 2018 թվականի ինը ամիսներին պետական բյուջեից հատկացված միջոցների համապատասխանաբար՝ 89.2%-ը և 91.1%-ը ՊՈԱԿ-ը ուղղել է աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսերին: 2017 թվականին ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը կազմել է 771 հաստիքային միավոր, որից 152 հաստիքներ՝ 210,153.6 հազ. դրամ տարեկան աշխատավարձի ֆոնդով առնչվում են մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության գործառույթներին:

Հաշվեքննության ընթացքում կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը ներկայացվել է ծանոթացման ՊՈԱԿ-ի տնօրենին: ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացվել է պարզաբանում նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծախսի վերաբերյալ, որը չի ընդունվել:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ

2017 թվականին և 2018 թվականի ինը ամիսներին պետական բյուջեի «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» հոդվածով որպես ֆինանսական աջակցություն Կենտրոնին դրամաշնորհի պայմանագրով հատկացվել է համապատասխանաբար՝ 38,581.0 հազ. դրամ և 25,733.6 հազ. դրամ: Հատկացված գումարները, որպես աշխատավարձ վճարվել են Կենտրոնի համապատասխանաբար՝ 39 և 37 աշխատողներին: Դրամաշնորհի պայմանագրի համաձայն Կենտրոնը պետական կարիքների համար իրականացնում է տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը, տարբեր մարմիններին տեղեկատվությամբ ապահովումը, ոլորտը կարգավորող օրենսդրության վերաբերյալ լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացումը, միջազգային համագործակցությունը, տեխնիկական անվտանգության ոլորտի միջազգային համաժողովներին և միջոցառումներին մասնակցությունը, Կենտրոնի և արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործողների միջև տեղեկատվության փոխանակման ու տրամադրման իրականացումը, տեխնիկական անվտանգության ոլորտի կարգավորման նպատակով իրավական ակտերի մշակումը:

Կենտրոնն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պայմանագրային հիմունքներով իրականացնում է արտադրական վտանգավոր օբյեկտների օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Բացի Կենտրոնից, տեխնիկական անվտանգության փորձաքննություններ իրականացնում են նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից հավատարմագրված հինգ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ: 2017 թվականին Կենտրոնը 8847 փորձաքննության և ուսումնական դասընթացների ծառայությունների մատուցման դիմաց ստացել է 559,060.3 հազ. դրամ եկամուտ: 2018 թվականի ինը ամիսներին Կենտրոնի եկամուտը կազմել է 433,747.6 հազ. դրամ:

Կենտրոնի 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների ծախսերի ուղղությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Կենտրոնի ծախսերի ուղղությունները

հազ. դրամ

Ծախսերի ուղղություններ	2017 թվական	2018 թվականի ինը ամիսներ
Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարներ	552,256.7	394,544.3
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարներ	55,528.1	84,949.9
Վճարումներ ՀՀ պետական բյուջե	97,000.0	82,400.9
Վճարումներ համայնքների բյուջե	321.0	163.0
Այլ ընթացիկ ծախսեր	8,525.2	2,667.4
Ընդամենը	**713,631.0**	**564,725.5**

Հաշվեքննության ընթացքում կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը ներկայացվել է ծանոթացման Կենտրոնի տնօրենին: ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացվել են առարկություններ և բացատրություններ, որոնք չեն ընդունվել:

Ներքին աուդիտի համակարգի ուսումնասիրության վերաբերյալ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 30-ին վավերացվել է ներքին աուդիտի վարչության 2017, 2018 և 2019 թվականների ռազմավարական ծրագիրը և Նախարարության համակարգի աուդիտի ենթակա 51 միավորները դասակարգվել են ըստ ռիսկի խմբերի: Միաժամանակ վավերացվել է Նախարարության ներքին աուդիտի վարչության 2017 թվականի տարեկան ծրագիրը: Նախարարության համակարգի աուդիտի ենթակա միավորներից (ՊՈԱԿ, ՓԲԸ, տեսչություն, գործակալություն, վարչություն, առանձնացված ստորաբաժանում, հիմնադրամ) ընտրվել են 23 միավորներ, որոնք ներառվել են տարեկան ծրագրում, և աուդիտը ընդգրկող ժամանակաշրջան է սահմանվել 2016 թվականը և առանձին դեպքերում՝ նաև 2017 թվականի առաջին կիսամյակը: Ներքին աուդիտի ծրագիրը հիմնականում նախորդում է հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը: Աուդիտի ենթակա բոլոր միավորներում աուդիտը նախատեսվել է իրականացնել համապատասխանության և կատարողականի տեսակներով:

Ներքին աուդիտի վարչությունը բաղկացած է 11 հաստիքներից: 2017 թվականի տարեկան ծրագրով նախատեսվել է իրականացնել աուդիտ 820 մարդ/օրերի ընթացքում, իսկ մնացած ռեսուրսները նախատեսվել է օգտագործել չպլանավորված աուդիտի, խորհրդատվական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև վերստուգման գործընթացներ իրականացնելու համար: 2018 թվականի ներքին աուդիտի վարչության տարեկան ծրագրով նախատեսված է անցկացնել 24 աուդիտ՝ 785 մարդ/օրերի ընթացքում:

Իրականացված աուդիտի արդյունքում արձանագրվել են նյութական արժեքների պակասորդներ, աշխատավարձի և կենսաթոշակի հավելյալ վճարումներ, գնման գործընթացների և այլ ընթացակարգային խախտումներ:

2017 թվականի ընթացքում ներքին աուդիտ է իրականացվել տարեկան ծրագրով նախատեսված աուդիտի ենթակա 23 միավորներից 21-ում, «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ-ում և «Տեղեկատվության ազդարարման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում աուդիտ չի անցկացվել: Աուդիտի ենթարկված միավորներում աուդիտի կատարողականի տեսակով խախտումներ չեն արձանագրվել, դրանց կողմից իրականացվող գործառույթները չեն գնահատվել տնտեսման, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ հաշվեքննության արդյունքում արձանագրված առանձին խեղաթյուրումները, խախտումները և թերությունները առկա են եղել նաև աուդիտը ընդգրկող ժամանակաշրջանում, դրանք ժամանակին հայտնաբերելու և հետագայում բացառելու նպատակով անհրաժեշտ է բարձրացնել Նախարարության ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը

1. Հաշվի առնելով, որ տեխնիկական անվտանգության բնագավառում գործառույթները իրականացնում են տարբեր մարմիններ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը ու համակարգի այլ ստորաբաժանումները, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ինչպես նաև մասնավոր ընկերությունները, որի պայմաններում բազմաթիվ արտադրական վտանգավոր օբյեկտներ չեն ներկայացվում ռեեստրում գրանցման կամ չեն անցնում տարեկան փորձաքննություն՝ ռիսկերից խուսափելու ու վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է քննարկել իրականացվող գործառույթները կենտրոնացնելու նպատակահարմարությունը, վերանայել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավաբանական կարգավիճակը, տարանջատելով պետական գործառույթները ձեռնարկատիրական գործունեությունից:

2. Հաշվի առնելով, որ տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում առկա են էական խախտումներ, անհրաժեշտ է հանձնարարել նոր ստեղծված՝ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ձեռնարկել միջոցներ՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտի նկատմանբ պատշաճ ու արդյունավետ հսկողություն իրականացնելու ուղղությամբ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը

1. Պետական բյուջեից հավելյալ հատկացումները և չօգտագործված մնացորդների առաջացումը բացառելու նպատակով «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով բյուջետային հայտը անհրաժեշտ է հաշվարկել կենսաթոշակի անցնողների վերաբերյալ իրատեսական տվյալների հիման վրա:

2. Հակակարկտային պաշտպանության խնդիրը համապարփակ լուծելու նպատակով՝ քննարկել հակա-

կարկտային պաշտպանությունը առավել արդյունավետ մեթոդի կիրառմամբ իրականացնելու հնարավորությունը:

3. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքված դրամաշնորհի պայմանագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի ձևին ու վերանայել հատկացվող դրամաշնորհի չափը:

4. Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի տարբեր կառուցապատման օբյեկտներում, պայմանավորված կառուցապատողներին սնանկ ճանաչելու գործընթացներով, տեղակայված բազմաթիվ վերամբարձ կռունկներ տարիներ շարունակ չեն շահագործվում և չեն անցնում տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննություն, տեխնածին վթարներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ այդ վերամբարձ կռունկների տեխնիկական վիճակը փորձաքննության միջոցով պարզելու համար:

ՀՀ փրկարար ծառայությանը

1. Բյուջետային միջոցների օգտագործման ընթացքում ոչ նպատակային և չհիմնավորված ծախսերը բացառելու նպատակով անհրաժեշտ է բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմել պահանջի իրատեսական հաշվարկների հիման վրա:

2. Բյուջետային միջոցների գերածախսեր թույլ չտալու նպատակով «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով ծախսերը կատարել լիմիտներին համապատասխան:

«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին

Հաշվի առնելով, որ զգալի թափուր հաստիքների առկայության պայմաններում պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքները ամբողջությամբ կատարվում են, բյուջետային միջոցները տնտեսելու նպատակով անհրաժեշտ է վերանայել և օպտիմալացնել հաստիքացուցակը:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին

Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ֆինանսական հաշվետվությունները պատշաճ ձևով կազմելու և չհիմնավորված ու ոչ նպատակային ծախսերը բացառելու ուղղությամբ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

Հավելված 1

Տեսչության կողմից 2017 և 2018 թվականներին հարուցված վարչական վարույթների վերաբերյալ (ընտրանքային)

Տուգանք չի նշանակվել		Նշանակվել է տուգանք		
կազմակերպություն	խախտում	կազմակերպություն	խախտում	տուգանք (հազ. դրամ)
«Դավալու Գազ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արարատի մարզ գ. Արարատ, Գրիբոյեդովի փ.67	ՀԱԿ 46,47,48 կետերի պահանջը	«Խաչարմ» ՍՊԸ, Արարատի մարզ, գ.Հայանիստ	ՀԱԿ 17,42,43,44,45 կետերի պահանջը	50.0
«ԹԵԳԱԱՐ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արարատի մարզ, գ. Արալեզ,Երևանյան փ.1	ՀԱԿ 46,47,48 կետերի պահանջը			
«Նորապատ» ԱԿ, ԱԳԼՃԿ Արմավիրի մարզ, գ. Քարակերտ	ՀԱԿ 2,12,26,28,29,30,32,33, 35,38,39,43,44,45 կետերի պահանջը			
«Արվիկա Կլասիկ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ ք. Արտաշատ	ՀԱԿ 43,44 կետերի պահանջը			
«Գավ Բազ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ Արարատի մարզ գ. Ավշար	ՀԱԿ 43,44 կետերի պահանջը			
«Քաջ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան փ.	ՀԱԿ 2,12,16,36,37,39,40 կետերի պահանջը	«Թեմ Արմ Կար» ՍՊԸ ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ ք. Արմավիր	ՀԱԿ 2,4,6,7,12,13,16,32, 34,36,37,39,41,43,49 կետերի պահանջը	50.0
«Գրորգյան-Ռեզյան Բարեկամություն» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր Երևանյան փ.	ՀԱԿ 9,11,25,32,36,37,39,41 կետերի պահանջը	ԲՈՒԱՏ ԲԲԸ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, ԱԳԼՃԿ	ՀԱԿ 11,21,26,28,29, 32,35,36,37,38,39,40 կետերի պահանջը	40.0
Ա/Ձ Աշոտ Միրզոյան, ԱԳԼՃԿ, Արարատի մարզ, գ Հոտաշատ	ՀԱԿ 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35,36,37,38,39,40 կետերի պահանջը	Ա/Ձ Արման Սահակյան, Արարատի մարզ, գ. Սայաթ Նովա, ԱԳԼՃԿ	ՀԱԿ 2,36,43,44,45,49,50 կետերի պահանջը	50.0
«Արարատ Գրուպ» ՍՊԸ, գազի կոմպրեսոր, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Արարատյան խճ.9	ՀԱԿ 5,14,15,21,22,29,34, 42,45, 49 կետերի պահանջը			
«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ, Ճնշակայան,	ՀԱԿ 40,41,42,43,44,45,51,52.			

Արարատի մարզ, ք. Վեդի	26 կետերի պահանջը			
«Շահումյան Վին» ՍՊԸ, կաթսայատուն, Արարատի մարզ, գ. Շահումյան	ՀԱԿ 39,40,41,42,47,48,50, 51,52 կետերի պահանջը			
«Մեծն Գառնիկ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ, գ Խորոնք	ՀԱԿ 14,16,32,35,36,40, 41,44,45 կետերի պահանջը	Ավենտուս ՍՊԸ, ԱԳԼՃԿ,Արմավիրի մ,Զվարթնոց թ,	ՀԱԿ 9,11,16,17,20,36,37,39,41,43,49,50 կետերի պահանջը	50.0
«Էջ Գազ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ ,ք. Էջմիածին, Զվարթնոց թ.	ՀԱԿ 2,7,16,28,29,32,33,36, 38,39,40,43,45 կետերի պահանջը	«Էջ Գազ» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ գ.Արշալույս	ՀԱԿ 2,7,11,13,28,29,30,32, 33,34,35,36,39,40,41 կետերի պահանջը	25.0
Ա/Ձ Կարինե Քոչարյան, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար Երևանյան փ. 135	ՀԱԿ 2,9,11,16,21,28,29, 37,38,39 կետերի պահանջը			
«Արջաղբյուր» ՍՊԸ, ԱԳԼՃԿ, Արմավիրի մարզ, գ. Մրգաշատ	ՀԱԿ 32,40,42,44 կետերի պահանջը			

			Հավելված 2
2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում չգրանցված հակակարկտային կայաններ			
ՀՀ համայնքներ	Համայնքային սեփականության	Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատկանող	Ընդամենը
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
գ. Արաքս (Արմ.)	2	-	2
գ. Շենավան	2	-	2
գ. Բերքաշատ	2	-	2
գ. Վանանդ	2	-	2
գ. Արևադաշտ	1	-	1
գ. Նոր Արտագերս	1	-	1
գ. Մրգաշատ	1	-	1
գ. Բամբակաշատ	1	-	1
գ. Արմավիր	1	-	1
գ. Արտամետ	2	1	3
գ. Կողբավան	-	3	3
գ. Հացիկ	1	-	1
գ. Արգինա	5	1	6
գ. Շենիկ	5	-	5
գ. Քարակերտ	3	1	4
գ. Ծաղկալանջ	2	-	2
գ. Ամասիա	1	-	1
գ. Դալարիկ	-	3	3
գ. Լեռնագոգ	2	-	2
գ. Երվանդաշատ	2	-	2
գ. Բագարան	6	1	7
գ. Տանձուտ	4	-	4
գ. Արևիկ	1	-	1
գ. Եղեգնուտ	3	-	3
գ. Արտաշար	2	-	2
գ. Լուկաշին	1	-	1
գ. Նորավան	1	-	1
գ. Մայիսյան	2	-	2
գ. Արագած	2	-	2
գ. Աղավնատուն	2	-	2
գ. Լեռնամերձ	2	-	2
գ. Ամբերդ	2	-	2
գ. Այգեշատ (Վաղ.)	2	-	2
գ. Դաշտ	2	-	2
գ. Նորակերտ (Վաղ.)	2	-	2
գ. Բաղրամյան (Վաղ.)	2	-	2
գ. Լենուղի	1	-	1
Ընդամենը	73	10	83
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
գ. Վեդի	2	-	2

գ. Այգավան	1	-	1
գ. Ոսկետափ	2	-	2
գ. Արալեզ	1	-	1
գ. Նոր Կյանք	1	-	1
գ. Այգեզարդ	3	-	3
գ. Այգեպատ	1	-	1
գ. Վերին Արտաշատ	4	-	4
գ. Քաղցրաշեն	2	-	2
գ. Նորաշեն	2	-	2
գ. Հնաբերդ	1	-	1
գ. Նարեկ	2	-	2
գ. Դվին	4	-	4
գ. Այգեստան	2	-	2
գ. Կանաչուտ	2	-	2
գ. Բյուրավան	1	-	1
գ. Մխչյան	1	-	1
գ. Ջրահովիտ	1	-	1
գ. Ընդամենը	33	-	33
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
գ. Կարբի	2	1	3
գ. Օհանավան	2	-	2
գ. Աղձք	-	1	1
գ. Կոշ	-	3	3
գ. Արագածավան	1	4	5
գ. Արագածոտն	-	1	1
գ. Աշնակ	1	-	1
գ. Լուսակն	1	1	2
գ. Արտենի	4	-	4
գ. Սասունիկ	1	-	1
ք. Աշտարակ	2	-	2
Ընդամենը	14	11	25
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
գ. Վարդաբլուր	-	1	1
գ. Ագարակ	3	-	3
գ. Լեջան	1	-	1
գ. Կողես	2	-	2
գ. Օձուն	2	-	2
ք. Վանաձոր	-	1	1
գ. Հագվի	1	-	1
գ. Մեդովկա	-	2	2
գ. Միխայլովկա	-	2	2
գ. Յաղդան	-	1	1
գ. Ամրակից	1	-	1
գ. Կարմիր Աղեկ	1	-	1
գ. Մղարթ	1	-	1
գ. Արևածագ	1	-	1
գ. Ծաթեր	1	-	1
գ. Այգեհատ	1	-	1
գ. Ճոճկան	3	-	3

գ. Մեծ Այրում	3	-	3
գ. Աքորի	1	-	1
Ընդամենը	22	7	29
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
գ. Արգել	-	2	2
գ. Ակունք	-	2	2
գ. Նոր Արտամետ	-	1	1
գ. Նուռնուս	-	1	1
Ընդամենը	-	6	6
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
գ. Բագրատաշեն	3	-	3
գ. Պտղավան	2	-	2
գ. Լճկաձոր	1	-	1
գ. Հաղթանակ	2	-	2
գ. Արճիս	2	-	2
գ. Բերդավան	2	-	2
գ. Կողբ	1	-	1
Ընդամենը	13	-	13
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
գ. Մեղրաշատ	2	-	2
գ. Հայկավան	3	-	3
գ. Քեթի	2	-	2
գ. Ոսկեհասկ	2	-	2
գ. Հացիկ	3	-	3
գ. Գետք	3	-	3
գ. Կամո	1	-	1
գ. Վահրամաբերդ	2	-	2
գ. Բագրավան	2	-	2
գ. Անուշավան	4	-	4
գ. Փանիկ	3	-	3
գ. Մեծ Մանթաշ	2	-	2
գ. Լուսակերտ	4	-	4
գ. Հովտաշեն	3	-	3
գ. Սպանդարյան	3	-	3
գ. Կապս	3	-	3
գ. Բյուրակն	1	-	1
գ. Գեղանիստ	3	-	3
Ընդամենը	46	-	46
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
գ. Արենի	-	1	1
գ. Աղավնաձոր	-	1	1
Ընդամենը	-	2	2
Ընդամենը	201	36	237

Հավելված 3

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
/«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման» ծրագրի և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների մասով/

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը պետական բյուջեի՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմի մասով)» ծրագրով և Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի Հաշվեքննության թիվ 1 արձանագրությունն ուսումնասիրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում: ՈՒսումնասիրության արդյունքում ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

1. Արձանագրված էներգետիկ ծառայությունների գերածախսի մասով անհրաժեշտ է նշել, որ նախարարության նորակառույց 3-րդ մասնաշենքում 2017 թվականին, բացի արձանագրությունում նշված ՊՈԱԿ-ներից, տեղակայված են եղել նաև ՀՀ ԱԻՆ աշխատակազմի Պետական ռեզերվների, Լիցենզավորման և ատեստավորման գործակալությունները և փրկարար ծառայության հոգեբանական ծառայությունը: Նշված մասնաշենքը փաստացի սկսվել է շահագործվել 2016 թվականի նոյեմբեր ամսից, սակայն շինարարի կողմից փաստաթղթերով հանձնվել և սեփականության իրավունքը գրանցվել է 2018 թվականի փետրվար ամսին, որի պատճառով տվյալ մասնաշենքի շահագործման և պահպանման ծախսերը, մասնավորապես էներգետիկ ծառայությունների մասով, չէին կարող ընդգրկվել 2017 թվականի բյուջետային հայտում, հետևաբար այդ մասնաշենքի շահագործման հետևանքով առաջացել են փաստացի մատուցված էներգետիկ ծառայությունների գծով պարտքեր, որոնք վճարվել են տարվա վերջին առաջացած տնտեսումների վերաբաշխման հաշվին: Ինչ վերաբերվում է էներգետիկ ծառայությունների պարտքերի հետևանքով առաջացած տույժ-տուգանքներին, ապա պետք է նշել, որ հատկացված բյուջեի եռամսյակային համամասնական բաշխված գումարները չեն բավարարել փաստացի մատուցված էներգետիկ ծառայությունների ամբողջ գումարի վճարմանը, հետևավաբար առաջացել են մատուցված ծառայությունների դիմաց պարտքեր և հաշվարկվել են դրանց համապատասխան տույժ-տուգանքներ: Տարեվերջին առաջացած տնտեսումների վերաբաշխման վերաբերյալ համապատասխան հայտը ուղարկվել ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն, ստացվել է թուլտվություն վերաբաշխման վերաբերյալ, կատարվել է վերաբաշխումը և վճարվել են էներգետիկ ծառայությունների դիմաց պարտքերը: Նախարարությունը 2018 թվականին վիճակը շտկել է՝ նախարարության 3-րդ մասնաշենքի սեփականության իրավունքի գրանցումից հետո պայմանագրեր են կնքվել այդ մասնաշենքում տեղակայված և արձանագրությունում նշված ՊՈԱԿ-ների հետ էներգետիկ ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու վերաբերյալ՝ ըստ 2005թ. ապրիլի 28-ի 629-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմերի:
2. Խոտհնձիչ մեքենաների և սանմաքրման աշխատանքների համար նախարարության պահեստից և փրկարար ծառայությունից 2017 թվականի ընթացքում մեկ անձի ստորագրությամբ դուրս գրված բենզինի վերաբերյալ հարցը ընդամենը փաստաթղթային թերի ձևակերպում է՝ ֆինանսատնտեսագիտական վարչության նախկին պետի բացթողումն է, ով պատշաճ ուշադրություն չի դարձրել փաստաթղթերի ձևակերպմանը և ընդունել է ակտերը առանց համապատասխան ստորագրությունների: Նշված բենզինը դուրս է գրվել ոչ միայն խոտհնձիչ մեքենաների այլ նաև ձյուն մաքրող մեքենաների շահագործման համար և այդ աշխատանքները փաստացի կատարվել են, որը կարող են

հաստատել նաև նախարարության այգեպանները: Նախարարությունում 2018 թվականի սկզբից ձյուն մաքրող և խոտհարկ մեքենաների շահագործման համար անհրաժեշտ բենզինի դուրս գրման փաստաթղթային ձևակերպումների նշված բացթողումը շտկվել է՝ բենզինի դուրս գրման ակտերը ստորագրել են ոչ միայն նյութական պատասխանատուները, այլ նաև փաստացի աշխատանք կատարող անձիք:

3. <<ԻՍՈՒԶՈՒ>> մակնիշի հրշեջ ավտոմեքենաների վերանորոգման համար <<Լավ ընկեր>> ՍՊԸ-ին կանխավճարի փոխանցման մասով հարկ ենք համարում նշել, որ այն իրականացվել է <<Անելիք բանկ>> ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 22-ին տրված թիվ 12-1032 <<Կանխավճարի բանկային երաշխիք>> -ի հիման վրա: Փրկարար ծառայության համակարգում բացի <<ԻՍՈՒԶՈՒ>> մակնիշի հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներից շահագործվում են նաև դեռևս 1980-90-ական թվականների ԽՍՀՄ արտադրության ԶԻԼ և ՈՒՐԱԼ մակնիշի ավտոմեքենաներ, որոնց անվադողերով և այլ պահեստամասերով ապահովելը դարձել էր հրատապ անհրաժեշտություն: Այդ պատճառով ԻՍՈՒԶՈՒ մակնիշի ավտոմեքենաների պահեստամասերի հետ ներկայացվել է նաև նշված ավտոմեքենաների պահեստամասերի գնման հայտը: Պահեստամասերը փաստացի ձեռք են բերվել և տեղադրվել են համապատասխան ավտոմեքենաների վրա, որը կարող են հաստատել նաև փրկարար ծառայության տվյալ ժամանակահատվածում գործող ղեկավարությունը և թիկունքի ու նյութատեխնիկական ապահովման վարչության համապատասխան աշխատակիցները: Հակառակ դեպքում այդ ավտոմեքենաները դուրս կգային շահագործումից, իսկ փրկարար ծառայության որոշ հրշեջ-փրկարարական ջոկատներ կմատնվեին անգործության և չէին կարողանա իրականացնել ծառայության առջև դրված խնդիրները: Անհրաժեշտ է նշել նաև, որ բյուջեով հատկացված միջոցները չեն բավարարում ամբողջությամբ իրականացնել հրշեջ-փրկարարական տեխնիկայի վերանորոգման աշխատանքները: Ինչ վերաբերվում է անվադողերի գներին, ապա պետք է նկատի ունենալ, որ այստեղ ներառված են նաև անվադողերի բալանսավորման և տեղադրման աշխատանքները, բացի այդ մրցույթին մասնակցել է միայն մեկ ընկերություն:

4. <<Արմ-Սեքյուրիթի>> ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքները իրականացվել են ցուցահանդեսից առաջ և դրա ընթացքում՝ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա: Կառավարության թիվ 1112-Ա որոշումը կայացել է 2017 թվականի սեպտեմբերի 9-ին, այսինքն ցուցահանդեսի ավարտից հետո: ՀՀ ֆինանսների նախարարության վճարումների համակարգով ներկայացված պայմանագրերը դրական եզրակացություն չեն ստացել, որի պատճառով ՀՀ կառավարության վերը նշված որոշման մեջ 2017 թվականի դեկտեմբեր 7-ին ՀՀ կառավարության թիվ 1563-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն՝ տվյալ գնումները մեկ անձից կատարելու վերաբերյալ: Աշխատանքներն ու ծառայությունները մատուցողների կողմից դուրս են գրվել հաշիվներ, որոնք պայմանագրերի հետ միասին ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն, դրանք վճարելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից 2017 թվականի դեկտեմբերի 15-ին ստացվել են դրական եզրակացությունները և կատարվել են վճարումները: Բոլոր փաստաթղթերը պատշաճ ձևակերպված և վավերացված են եղել, հակառակ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությունը դրանք չէր ընդունի և վճարման համար դրական եզրակացություն չէր տա, իսկ գանձապետարանը վճարումները չէր կատարի:

5. ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1600-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից 2017 թվականի օգոստոսի 22-ից 27-ը փրկարար ծառայության ջոկատը՝ Բորժոմի անտառների հրդեհը շիջելու նպատակով Վրաստան գործուղման հետ կապված ծախսերից 1,439,0 հազ.դրամի ծախսը հիմանորվել է Վրաստանի խանութներից սննդամթերքի գնման ՀԴՄ կտրոններով, որն ընդունել է ՀՀ ֆինանսների նախարարությունը և տվել է դրական կարծիք ՀՀ կառավարության կողմից նշված որոշումը կայացնելու վերաբերյալ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
/«Փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում» ծրագրի մասով/

Փրկարար ծառայությունը, ինչպես հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում, այնպես էլ ներկայումս չունի ֆինանսական և տնտեսագիտական գործառույթների իրականացման իրավասություններ /կամ կարգավիճակ/ ու ստորաբաժանումներ: Փրկարար ծառայությունն ունի թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչություն՝ համապատասխան իրավասությոջուններով:

Փրկարար ծառայության տնօրեն նշանակվել եմ ՀՀ վարչապետի 2018 թվականի հուլիսի 27-ի N837-Ա որոշման համաձայն, Թիկունքի և նյութատեխնիկական ապահովմ,ան վարչության նաձկին ղեկավարությունը նույնպես ազատվել են փրկարարական ծառայությունից:

Ներկայացնում եմ հաշվեքննությամբ արձանագգրված թերությունների վերաբերյալ Փրկարար ծառայությունում, հաշվի առնելով վերոգրյալը, հնարավորինս վեր հանված տեղեկատվությունը և պարզաբանումները՝

1. Էներգետիկ ծառայությունների գծով 305334.4 կվտ/շ էլեկտրաէներգիայի գերածախսը կապված է հետևյալ հանգամանքների հետ՝

- Էներգետիկ ծառայությունների գծով (և գազի) պետական բյուջեով Փրկարար ծառայությանը հատկացվող միջոցները չեն համապատասխանում սահմանված նորմերին, յուրաքանչյուր տարի ՄԺԾԾ-ով և բյուջետային հայտերով ներկայավվող չափաքասնակները չեն ընդունվում ու հատկացվում են պահանջարկից էապես նվազ միջոցներ:
- փոփոխվել են Փրկարար ծառայության ստորաբաշանումների տեղակայման վայրերը, ինչպես նաև ստեղծվել են նոր ստորաբաժանումներ: Այսպես, 2017թ. ընթացքում ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ 12 համայնքներում ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության հենակետեր, որոնց համար էներգետիկ ծառայությունները 2017թ. բյուջետային հայտով չեն ներկայացվել այդ տարածքների մասով համապատասծան վարձակալության պայմանագրերի և վարձակալական իրավունքի գրանցման վկայականների բացակայության պատճառով» Փրկարար ծառայության կողմից 28387 կվտ/ժ էլեկտրաէներգիայի գերածախսը պայմանավորված է վերը նշված հանգամանքով: Անհրաժեշտ է նշել, որ սահմանամերձ համայնքներում 2017թ. ընթացքում ստեղծված քաղաքացիական պաշտպանության հենակետերի փրկարարաները այդ համայնքներում իրականացրել են շուրջօրյա ծառայություն՝ արձագանքելով այդ համայնքներում առաջացած հրդեհներին, վթարներին և այլ պատահարներին, պահպանելով համայնքների ջրամբարները, աղբյուրները, կամուրջները, իսկ գիշերվա ժամերին նաև իրականացրել են շրջիկ հերթապահություն համայնքում:

  Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պահեստի մասով 20804 կվտ/ժ էլեկտրաէներգիայի գերածախսը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչությունը նախկինում տեղակայված է եղել Աշխատարակի հրշեջ-փրկարարական ջոկատի տարածքում, իսկ 2016-2017թթ. փոխվել է Արագածոտնի ՄՓՎ-ի տեղակայման վայրը և այն այժմ գտնվում է նշված պահեստի տարածքում: Այս դեպքում նույնպես համապատասխան փաստաթերի ուշ ձևակերպման պատճառով էներգետիկ ծառայությունների ծախսերը չեն ընդգրկվել 2017թ. բյուջետային հայտում: Նույն իրավիճակում են հայտնվել նաև Շիրակի և Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչությունները, որոնց կողմից էլեկտրաէներգիայի գերածախսը համապատասխանաբար կազմում է 38257 կվտ/ժ և 44419 կվտ/ժ:

  Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից 38213 կվտ/ժ էլեկտրաէներգիայի գերածախսը պայմանավորված է այն հանգամանքով, որ Լոռու ՄՓՎ-ի տեղակայման տարածքում գտնվում են նաև ԱԻՆ մյուս կառույցների ստորաբաժանումները, որոնք չեն հանդիսացել առանձին բաժանորդներ և նրանց կողմից ծախսված էլեկտրաէներգիայի քանակը հաշվառվել է Լոռու փրկարարական վարչության Վանաձորի N1 և Վանաձորի N2 հրշեջ-փրկարարական ջոկատների քարտերով:

- Էներգետիկ ծառայությունների ծախսերի մասով, վերը նշված պատճառով, դրանք չէին կարող ընդգրկվել 2017թ. բյուջետային հայտում, հետևաբար այդ մասնաշենքերի շահագործման հետևանքով առաջացել են փաստացի մատուցված էներգետիկ ծառայությունների գծով պարտքեր, որոնք վճարվել են տարվա վերջին առաջացած տնտեսումների հաշվին: Ինչ վերաբերում է էներգետիկ ծառայությունների պարտքերի հետևանքով առաջացած տույժ-տուգանքներին, ապա պետք է նշել, որ հատկացված բյուջեի եռամսյակային համամասնական բաշխված գումարները չեն բավարարել փատացի մատուցված էներգետիկ ծառայությունների ամբողջ գումարի վճարմանը, հետևաբար առաջացել են մատուցված ծառայությունների դիմաց պարտքեր և հաշվարկվել են դրանց համապատասխան տույժ-տուգանքներ: Տարեվերջին առաջացած տնտեսումների վերաբաշխման վերաբերյալ համապատասխան հայտը ՀՀ ԱԻՆ աշխատակազմի կողմից ուղարկվել է ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն, ստացվել է թույլտվություն վերաբաշխման վերաբերյալ, կատարվել է վերաբաշխումը և վճարվել են էներգետիկ ծառայությունների դիմաց պարքերը:

2. Հաշվեքննության արձանագրությամբ ներկայացված անհամապատասխանությունները, այդ թվում՝ «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով այսուհետ պետական բյուջեից հավելյալ հատկացումները, «Լավ ընկեր» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում առկա անհամապատասխանությունների, չեն առնչվում Փրկարարա ծառայության գործառույթների հետ, քանի որ ծառայությունը չունի իր ենթակայության տակ ֆինանսական գործառույթներ (պետական բյուջեով սահմանված ծրագրից ֆինանսական միջոցների տեղափոխում այլ ծրագիր, հոդվածային վերաբաշխում, գնումների համակարգում և այլն) իրականացնող ստորաբաժանում: ՝ «Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով այսուհետ պետական բյուջեից հավելյալ հատկացումենը և չօգտագործված մնացորդների առաջացումը բացառելու նպատակով՝ բյուջետային հայտը կհաշվարկվի և կներկայացվի կենսաթոշակի անցնողների վերաբերյալ իրատեսական տվյալների հիման վրա:

3. Փրկարար ծառայության կողմից 2017թ. ընթացքում 19966 լ և 2018թ. հունվար-ապրիլ ամիսներին 6800 լ բենզին ՀՀ ԱԻՆ համակարգի այլ ծառայություններում հաշվառված ավտոմեքենաներին հատկացնելու վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ փաստացի այդ ավտոմեքենաները շահագործվել են Փրկարար ծառայության կողմից, մասնավորապես կահավորված են եղել հատուկ կապի միջոցներով, այսդ թվում՝ միջազգային որոնողա-փրկարարարական կազմակերպության հետ արբանյակային կապով, և ապահովել են Փրկարար ծառայության ստորաբաժանումների հետ Նախարարության ղեկավարության կապը, կամ որոշ պաշտոնատարև անձինք գործքուղվել են Փրկարար ծառայության մարզային ստորաբաժանումներ՝ կոնկրետ հանձնարարություններով: Հարկ է նշել, որ բենզինի նշված ծասերը կատարվել են համապատասխան հրամանների հիման վրա /գործուղումների հրամանները՝ 325 թերթից, կցվում են/: Վերոնշյալ և խոտհնձիչ մեքենաների և սանմաքրման աշխատանքների համար Փրկարար ծառայության պահեստից 2017թ. դուրս գրված 1470 լ բենզինի հաշվետվությունները ներկայացվել ե ն Ֆինանսատնտեսագիտական վարչություն: Նշված բենզինը դուրս է գրվել ոչ միայն խոտհարք մեքենաների, այլև ձյուն մաքրող մեքենաների շահագործման համար և այդ աշխատանքները փաստացի կատարվել են, որը կարող են հաստատել նաև Նախարարության այգեպանները: 2017թ. նոյեմբերին ՓԾ պահեստից ելքի կարգագրով որպես նվիրատվություն անանուն դուրս է գրվել 29000 լ դիզելային վառելիք: Համաձայն ԹՆԱՎ կողմից Ֆինանսատնտեսագիտական վարչության ներկայացված հաշվետվությունների 2017թ. նոյեմբեր ամսին 29000 լ դիզելային վառելիքը մատակարարաի մոտ փոխարինվել է 25000 լ ռեգուլյար տեսակի բենզինով, քանի որ այդ ժամանակ եղել է բենզինի խիստ կարիք, որը լուծվել է նշված փոխանակության եղանակով: 01.01.-01.05.2018թ. Ծառայության ստորաբաժանումների բաշխված վառելիքի մասին հաշվետվության զննությամբ պարզվել է, որ 2018թ. առաջին չորս ամիսների ընթացքում պահեստից դուրս գրված ու ԹՆԱՎ կողմից ստացված 1,936.0 հազ. դրամի պրեմիում տեսակի բենզինը ավտոմեքենաներին չի բաշխցվել. սակայն, ըստ ծախսի վերաբերյալ առկա հիմքերի,

բենզինի մնացորդ չի առաջացել և այդ քանակի բենզինի ծախսը չի հիմնավորվում: Նշված քանակության բենզինի ծախսին անդրադարձվել է տվյալ կետի սկզբում, որը կազմում է 2018թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ ԱԻՆ և Փրկարար ծառայության ավտոմեքենաներին ՓԾ-ից բենզինի դուրս գրման, որը արդեն պարզաբանվել է սույն կետում:

4. Ծառայության «Այլ հարկեր» հոդվածից 2017թ. և 2018թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարվել են համապատասխանավար 25,584.0 հազ. դրամի և 9,234.0 հազ. դրամի ապրանքների և ծառայությունների ձեռք բերում առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործընթացի: Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է ճիշտ, սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ տվյալ գնումները փաստացի կատարվել են ՓԾ կարիքների համար առաջացած հրատապ անհրաժեշտությունից ելնելով, հիմնականում առաջին իսկ պատահած առևտրի կետից կամ ծառայություն մատուցողից: Հիմնականում այս գնումները կատարվել ենյ 2017թ. սեպտեմբերի 2-ից 4-ը կազմակերպված «Արմ-Սեքյուրիթի» ցուցահանդեսի ընթացքում՝ ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով և 2018թ. առաջին եռամսյակում Թումանյանի սողանքի կանխարգելման հրատապ աշխատանքներն իրականացնելու ընթացքում: Անհրաժեշտ է եղել հոդվածով տնտեսված միջոցները վերաբաշխել սահմանված կարգով այլ հոդվածների, կազմակերպել գնումների գործընթաց, որից հետո միայն ձեռք բերել անհրաժեշտ ապրանքները և ծառայությունները, սակայն ամենայն հավանականությամբ ժամանակի սղության պատճառով ու առաջացած խնդիրներն օպերատիվ լուծելու նպատակով թույլ է տրվել օրենքի խախտում և ձեռք են բերված ապրանքնեևրն ու ծառայությունները փաստացի ներդրվել են սողանքի կանխարգելման աշխատանքներում:

5. 2017թ. ընթացքում ձեռք բերված 142 շիշ ոգելից խմիչքների նպատակային օգտագործումը հիմնավորվում է 2017թ. ընթացքում նախարարությունում համագործակցության հարցերով հյուրընկալված արտասահմանյան եկրների և միջազգային կազմակերպությոնների թվաքանակով: Տարբեր արտասահմանիյան երկրների և միջազգային կազմակերպությունների հետ նախարարությունն իրականացրել է արդյունավետ համագործակցություն, որի արդյունքն այդ կազմակերպությունների կողմից մի քանի տասնյակ միլիոնավոր դոլարների տեխնիկական աջակցություն է տրվել Փրկարար ծառայությանը, մասնավորապես հայ-ռուսական հումանիտար արձագանքնման կենտրոնին ռուս գործընկերիների կոմղից տրամադրված փրկարարական տեխնիկան և ճապոնական ՋԱՅԿԱ կազմակերպության կողմից տրամադրված և տրամադրվելիք հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներին ու փրկարարական տեխնիկան:

Հաշվեքննության մեջ նշված այլ թերություններին («Գրասենյակային նյութեր և հագուստ», «Ներքին գործուղումներ» և այլն) սույն պարզաբանումներով չենք անդրադարձել, որովհետև ինչպես նշվել է վերը, Փրկարար ծառայության գործառույթների մեջ չեն մտնում:

Ընդ որում՝ հաշվետվությամբ արձանագրվել են խախտումներ բյուջեում կատարված հոդվածների վերաբաշխման և գնումների իրականացման գործընթացներում, որոնց վերաբերող գործառույթներ Փրկարար ծառայությունը չի իրականացնում:

Վառելիքի և ավտոպահեստամասերի բաշխման, ավտոմեքենաների տեխսպասարկման ծառայությունների մատուցման ու այլ գործընթացներում թույլ տրված թերությունների համար պատասխանառու պաշտոնատար անձինք ազատվել են Փրկարար ծառայությունից:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
/«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասով/

2018թ. հունիսի 25-ի թիվ 4/11 որոշմամբ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված թիվ 5 արձանագրության 2-րդ պարբերությամբ արձանագրված անարդյունավետ 990.0 հազ. դրամի ծախսի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը՝

ՀՀ կառավարության 07.10.2004թ. N1373-Ն որոշմամբ Երևան քաղաքի Նորք-Մարաշ համայնքի սահմաններում գտնվող հողերից 5000քմ մակերեսով հողամաս է հատկացվել ՊՈԱԿ-ին: Նույն որոշմամբ նախկինում ՊՈԱԿ-ին ամրացված Արաբկիր համայնքում, Անտառային փողոց 125 հասցեում գտնվող հողամասը հատկացվել է «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերությանը: Արաբկիր օդերևութաբանական կայանը Նորք-Մարաշ թաղամասում հատկացված նոր տարածք վերատեղակայելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 7-ի թիվ 39 արձանագրության 32-րդ կետով ՀՀ ֆինանսների, էկոնոմիկայի և բնապահպանության նախարարներին հանձնարարվել էր միջոցներ ձեռնարկել կայանը տեղափոխելու նպատակով: Սակայն խնդրին լուծում չէր տրվել և առ այսօր կայանը շարունակում է գործել Արաբկիր համայնքում գտնվող «Լոկալ Դիվելլոփըրզ» ՍՊ ընկերությանը պատկանող 0.42 հա մակերեսով տարածքում, որը շրջափակված է նորակառույց բազմահարկ շենքերով:

2017թ. Նորք-Մարաշ թաղամասում հատկացված հողակտորի հարակից տարածքի սեփականատեր Ավետիս Խաչամյանը դիմել էր ԱԻ նախարարին՝ ՊՈԱԿ-ին պատկանող 5000քմ հողմասից 2000քմ տարածք օտարելու դիմաց իր միջոցների հաշվին մնացած հողակտորի վրա օդերևութաբանական կայան կառուցելու առաջարկով: Առաջարկն ուսումնասիրելու, դրա նպատակահարմարությունը գնահատելու, շինարարական աշխատանքների արժեքը պարզելու համար կազմվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, որի համար վճարվել է 990.0 հազ. դրամ:

Գործընթացը շարունակելու համար շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Արաբկիր» օդերևութաբանական կայանի կառուցման մասին» որոշման նախագիծը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ խնդրում եմ ծախսը համարել արդյունավետ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ
/Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության մասով/

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում /այսուհետ՝ Տեսչություն/ ուսումնասիրվել է բյուջետային մուտքերի ապահովման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվեքննության թիվ 2 արձանագրությունը:

Արձանագրության տեքստում արվում են հետևություններ՝ Տեսչության ստուգումների ծրագիրը թերի կատարելու վերաբերյալ, հաշվի չառնելով ՀՀ կառավարության կողմից ստուգումների արգելքը: Վերջինս գործել է 2015 թվականից և, փաստացի, չի գործել միայն 2018 թվականից:

2017թ. ընթացքում Տեսչությունն իրականացրել է ստուգումներ ավտոգազալցավորման ճնշակայաններում /ԱԳԼՃԿ/, որոնք ընդգրկված էին ստուգումների ծագրում: Ստուգումներն իրականացվում էին այն պատճառով, որ ստուգումների արգելքը չէր տարածվում ԱԳԼՃԿ-ների վրա:

Տեսչության կողմից ստուգված բոլոր տնտեսվարողների մոտ «տեխնիկական անվտանգության կանոնների խախտումներ» չեն արձանագրվել, քանի որ ստուգումները, համաձայն օրենքի, իրականացվում էին ստուգաթերթերով, իսկ վերջիններս պարունակում են տեխնիակական անվտանգությանը վերաբերող միայն երկու հարց՝ ամենամյա փորձաքննության և ռեեստրում գրանցված լինելու վերաբերյալ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածով, ինչպես նաև «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները նշանակվել են /կամ վարչական վարույթները կարճվել են/ Տեսչության /վարչական մարմնի/ հայեցողական լիազորությունների իրականացման միջոցով: Ընդ որում՝ Տեսչությունը մշտապես ցուցաբերել է անհատական մոտեցում առկա փաստական հանգամանքների նկատմամաբ, և չի խախտել կամայականության արգելքի սկզբունքը: Փաստացի՝ արձանագրության մեջ նշված և վերլուծված չէ թեկուզ մեկ դեպք, երբ վարչական մարմինը խախտել է վերոհիշյալ սկզբունքը և դրսևորել կամանականություն:

Տեսչության կարգադրագրերը տրվել են անցկացված ստուգումների հիման վրա: Կարգադրագրերում նշված միջոցառումների իրականացման ժամկետները տարբեր են և կարող են հասնել մի քանի տասնյակի: Հարց է առաջանում, այդ ինչ իրավական հիմքով և ինչ քանակի տեսչական անձնակազմի միջոցով հիմնական ստուգումից հետո պետք է իրականացվեն բազմաթիվ լրացուցիչ ստուգումներ՝ միջոցառումների ժամկետների խախտումները արձանագրելու և վարչական տուգանքներ նշանակելու համար:

Տեսչությունն ԱԻՆ համապատասխան ստորաբաժանումներից պարբերաբար ստացել է տեղեկատվություն՝ արտադրական վտանգավոր օբյեկտները /ԱՎՕ/ սահմանված ժամկետում տեխնիկական անվտանգության փորձաքննության չենթարկելու վերաբերյալ, և բոլոր դեպքերում արձագանքել է այդ տեղեկատվությունը: Որոշ դեպքերում ԱՎՕ շահագործող անձինք ենթարկվել են վարչական ներազդման, որոշ դեպքերքում /կազմում են մեծամասնություն/՝ տեղում պարզվել է, որ շահագործող անձն արդեն իսկ իրականացրել է փորձաքննությունը և ստացել դրական եզրակացություն:

Բոլոր վերոհիշյալ պարագաներում մեզ համար անհասկանալի և անընդունելի է արձանագրության մեջ նշված այն եզրահանգումը, որ Տեսչությունը «արդյունավետ չի կատարել իրեն վերապահված գործառույթները»՝ ստուգումների ծրագրի կատարողականի ու վարչարարության արդյունավետության մասով:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
/«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասով/

1. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և Արտակարգ իրավիճակների նախարարության միջև կնքված պետության կողմից տրամադրված դրամաշնորհի հատկացման պայմանագրերով հստակ մատնանշված չի եղել, ՊՈԱԿ-ի կողմից մշակվող տեխնիկական կանոնակարգերի թվաքանակը: Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտումներ չեն արձանագրվել, ավելին ՊՈԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել բազմաթիվ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի մշակման ծրագրերին, դիտողություններ, առարկություններ և առաջարկություններ են ներկայացվել այլ պետական մարմինների կողմից մշակված տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ:

ՊՈԱԿ-ի և Արտակարգ իրավիճակների նախարարության միջև հետագայում կնքվող պայմանագրերը կհամապատասխանեցվեն ՀՀ կառավարության 23.04.2010թ. թիվ 566-Ն որոշման պահանջներին:

2. ՀՀ կառավարության 23.02.2017թ.-ի թիվ 165-Ն և 13.07.2017թ. թիվ 803-Ն որոշումներով ՊՈԱԿ-ն հատկացված «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով դրամաշնորհի գումարներից առաջացած մնացորդը ՊՈԱԿ-ի կողմից հետ է վերադրաձվելու պետական բյուջե:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունում առկա վրիպումները՝ մնացորդների վերաբերյալ, սահմանված կարգով վերացվել և ուղղվել են: Սակայն այն պնդումը, որ այդ վրիպումներն առաջացել են ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական գործունեությունը վեց բանկային հաշիվների միջոցով իրականացնելու հետևանքով, չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի համար հատկացված դրամաշնորհի գումարների ֆինանսատնտեսական գործունեությունը ՊՈԱԿ-ը վարել է միայն մեկ բանկային հաշվի միջոցով: Ներկա դրությամբ ՊՈԱԿ-ն առևտրային բանկերի հաշիվներով գործունեություն չի ծավալում՝ 2018թ. դեկտեմբերի 4-ից ՀՀ ՖՆ գործառնական վարչության գանձապետական հաշվեհամար ունենալու հետևանքով:

3. ՊՈԱԿ-ի հաստիքացուցակով նախատեսված 74 հաստիքային միավորից 33 հաստիք զբաղեցնում են հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք փաստացի աշխատում են ՃԿԿ-ում, իսկ ՊՈԱԿ-ի կողմից «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի միջոցով ապահովում է վերջինիս սննդի սպասարկումն ու տրամադրումը:

Մյուս պայմանագրային աշխատակիցները հանդիսանում են փորձագետներ, որոնց հետ մասնագիտական գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

4. ՊՈԱԿ-ի աշխատողների համար սահմանված պաշտոնական դրույքաչափերը համեմատելով նախարարության ոլորտում գործող մյուս ոչ առևտրային կազմակերպություններում նույն պաշտոնները զբաղեցնող աշխատողների պաշտոնական դրույքաչափերի հետ՝ արդյունավետ չէ, այն պատճառով, որ պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել ՊՈԱԿ-ների յուրաքանչյուր պաշտոն զբաղեցնողի աշխատանքային գործառույթների բարդությունը, ծավալը և այլ պայմանները:

Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում ենք, որ ՊՈԱԿ-ի աշխատողների կողմից իրենց կատարված աշխատանքի դիմաց վարձատրությունը բխում է ՀՀ օրենսդրությունից և օբյեկտիվ է:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված գործատուի կողմից աշխատակիցներին վճարվելիք լրավճարի փոխարեն մեխանիկական վրիպակի պատճառով հավելավճար է սահմանվել, սակայն իրավական ակտերի /հրամանների/ բովանդակությունից բխում է, որ դրանք ընդունվել են լրավճար վճարելու նպատակով: ՊՈԱԿ-ի կողմից հետագայում հավելավճար տրամադրելու հրամաններ չեն ընդունվի:

5. Բանկի կողմից վարկ վերցնելու հետ կապված հայտնում եմ, որ ՊՈԱԿ-ի կողմից վարկը հետ է վերադարձվել, իսկ վճարված տոկոսները անարդյունավետ ծախս չեն համարվում, քանի որ

ՊՈԱԿ-ն ունեցել է բանկային պարտավորվածություն՝ նախնական քաղաքական պայմանավորավածության համաձայն:

6. Ծաղկաձոր քաղաքում կայացած ԱՊՀ անդամ պետությունների արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի 2018թ. հերթական նիստին ՊՈԱԿ-ի կողմից 26 աշխատակիցների մասնակցությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ կազմակերպության մասնակիցներին ընդունող պետությունը պարտավոր է ապահովել մասնագետներ՝ տեխնիկական անվտանգության յուրաքանչյուր ոլորտից, ինչն արվել է նաև նախորդ տարիներին մյուս պետությունների կողմից:

7. ՊՈԱԿ-ը Երևան քաղաքում տեղակայված 37 հատ վերամբարձ կռունկների հետ կապված կանոնադրական գործառույթներ չուն